Azg
armenian daily

1 ՓԵՏՐՈՒԱՐ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 16 (1984)

Հաճերների ներխուժում «Արմինկո» ցանց

ԵՐԵՎԱՆ, 29 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Հունվարի 28-ին Հայաստանի «Արմինկո» հեռահաղորդակցական ընկերության հաճախորդները համակարգչահենների կողմից գրոհի են ենթարկվել:

«Կառավարչի» անունից տեղեկություն է ուղարկվել իրականում «տրոյական ձի» հանդիսացող ներդրված ծրագիրն աշխատեցնելու խնդրանքով, որը նույնացվում է AVR հակավիրուսային ծրագրի հետ, ինչպես «Trojan.PSW.Stealth.d»-ը:

Ինչպես տեղեկացրեց նույնպես գրոհի ենթարկված «Արմինկո»-ի առաջատար մասնագետներից մեկը՝ Արմեն Բաղդասարյանը, դա նմանատիպ առաջին դեպքը չէ: Բաղդասարյանը ցանցից օգտվողներին խորհուրդ տվեց չբացել նմանօրինակ հաղորդումները:

«Արմինկոն» պաշտոնապես հայտարարում է, որ իր պատվիրատուներին երբեք ներդրված ծրագրեր չի ուղարկում՝ ոչ իբր «կապերը վերսկսելու», ոչ էլ ծրագրային ապահովմանն առնչվող այլ նպատակների համար: «Արմինկոն» հույս ունի, որ ցանցից օգտվողներն առավել ուշադիր կլինեն եւ նման դեպքերում անմիջականորեն կկապվեն «Արմինկո» տեխնիկական աջակցության ծառայության հետ:

«ՎԱՆՈ+11» ԳՈՐԾ

Միմյանց հաջորդող հայտարարություններ, որոնք չեն առնչվում դատավարությանը

Դատավարությունը ձգձգելու հերթական հնարանք չէ՞ սա

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վանո Սիրադեղյանը հունվարի 31-ի դատական նիստում «չընդունեց» մեղադրող կողմի ներկայացրած հերքումը, որով դատախազությունը ցանկանում էր հաստատել, որ Աղվան Հովսեփյանն, իրոք, որոշակի ժամի դուրս է եկել Հենրիկ Խաչատրյանի աշխատասենյակից, ինչը բաց էր թողնված դատախազության հրապարակած ժամանակագրության տեքստում: «Այդ հրապարակումը հերքում չէ, այդ, եթե չեմ սխալվում, Աղվան Հովսեփյանի հարցազրույցն է, ես կասեի՝ ցուցմունքը», պատասխանեց ՀՀՇ վարչության նախագահը, որն ինչպես երեւում էր, նոր չէր ուսումնասիրել ենթակայման առարկա դարձած հրապարակումը: Սպանության օրը Արմենպրես գործակալությունն, իրոք, տարածեց տեղեկատվություն, ըստ որի, Սիրադեղյանը դեպքից կես ժամ առաջ էր հեռացել դատախազությունից, որտեղ հրավիրվել էր հարցաքննության:

Վանո Սիրադեղյանը հաստատեց, որ այդ օրն ինքը հարցաքննվել է Համբարձում Գալստյանի սպանության գործով, սակայն հարցաքննությունը վաղաժամ ընդհատվել էր, հակառակ դեպքում, սպանության պահին ինքը դատախազությունում կլիներ: «Ես համոզված եմ, որ սպանության կազմակերպիչներն այդ սցենարը համաձայնեցրել էին եւ կես ժամ հետո հաղորդում տվեցին», հայտնեց նախկին ՆԳ նախարարը: Նա եւ իր դատապաշտպան Վանյա Սուքիասյանը երեկվա նիստում լիովին սանձազերծել էին մեղադրողի դերը, եւ վերջինս իր հայտարարություն-մեղադրականը շարունակեց այնտեղից, որտեղից ընդհատել էր Սիրադեղյանը:

Տես էջ 3

ԴԱՎՈՍ

Քոչարյանը եւ Ալիեւը անհրաժեշտ են համարում խաղաղ կարգավորումը

Ալիեւը չի զլանում հիշեցնել, թե երբ կբացվի հայ-թուրքական սահմանը

ԲԱՔՈՒ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահները կարծիքների համաձայնության են եկել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության առնչությամբ: Այդ մասին հայտարարել է Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը՝ հունվարի 30-ին Դավոսից Բաքու վերադառնալուց հետո:

ղար Մադլեն Օլբրայթի հետ հանդիպման ընթացքում: ԱՄՆ-ի վարչակազմը «չափազանց շահագրգռված է» այդ հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորմամբ, նշել է Ալիեւը:

Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Բյուլենտ Էջեւիթի հետ իր հանդիպմանը՝ Ալիեւը հաղորդել է, որ «թուրքական կողմը մեկ անգամ եւս

Շվեյցարիայում տեղի ունեցած երկկողմ հանդիպումներից առանձնացնելով բանակցությունները Ռոբերտ Քոչարյանի հետ՝ Ալիեւը հայտարարել է. «Մենք շարունակեցինք երկկողմ բանակցությունները եւ փոխզիջումների որոնումը՝ միասնական կարծիքի հանգելով հակամարտության խաղաղ կարգավորման առնչությամբ»:

Ադրբեջանի առաջնորդի խոսքերով, ղարաբաղյան հակամարտության կարգավորման թեման գլխավորն է հանդիսացել նաեւ ԱՄՆ պետքարտուղար Մադլեն Օլբրայթի հետ հանդիպման ընթացքում: ԱՄՆ-ի վարչակազմը «չափազանց շահագրգռված է» այդ հակամարտության շուտափույթ խաղաղ կարգավորմամբ, նշել է Ալիեւը:

Անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Բյուլենտ Էջեւիթի հետ իր հանդիպմանը՝ Ալիեւը հաղորդել է, որ «թուրքական կողմը մեկ անգամ եւս հայտարարել է, որ հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման եւ օկուպացված տարածքների ազատագրման դեպքում կբացվի նաեւ հայ-թուրքական սահմանը»:

Ալիեւը նշել է, որ Դավոսում ենթարկվել է տարածաշրջանի անվտանգության պակտ ստեղծելու հնարավորությունը: «Ես այդ հարցով բոլոր հետաքրքրվողներին հիշեցրել եմ, որ առանց Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաշտության հաստատման անհնարին է որեւէ պակտի մասին խոսելը», ավելացրել է Հեյդար Ալիեւը:

Ռուսական ստորաբաժանումները վերահսկում են Գրոզնու «Մինուտկա» հրապարակը

ՄՈՍԿՎԱ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ռուսական զորային ստորաբաժանումները վերահսկողության տակ են առել Գրոզնու կենտրոնում գտնվող «Մինուտկա» հրապարակը, որի համար մարտերը շարունակվում էին երկու շաբաթ, հաղորդում է Հյուսիսային Կովկասում զորախմբավորման մամլո կենտրոնը: Կատաղի մարտեր են գնում «Գրոզնենեֆտի» շրջանում եւ Արգուն-Հին Աթագի ճանապարհների խաչմերուկում: Ռուսական զորքերը սեղմում են օղակը Գրոզնին պաշտպանող չեչենական ջոկատների շուրջ:

ՌԴ պաշտպանության նախարար Իգոր Սերգեեւի տվյալներով, կիրակի օրը Հին Սունժիի շրջանում զենքը վայր են դրել ավելի քան 100 չեչեն մարտիկներ, մի խումբ դաշտային հրամանատարների հետ չեչենական միլիցիայի հրամանատար Բեսլան Գանտամիրովի բանակցությունների արդյունքում: Գրոզնու պաշտպանության հրամանատար Ասլամբեկ Իսմայիլովը հերքել է չեչեն մարտիկների կամավոր հանձնվելու փաստը: Ռուսական դեսանտը գնդակոծում է Իսում-Կալե բնակավայրը եւ դեպի վրացական Շաթիլի գյուղ տանող ճանապարհները:

Սփյուռքը եւ եկեղեցին՝ ՀՅԴաշնակցությանը

Մոտավորապես այսպիսի տպավորություն ստեղծեց կիրակի օրը ՀՅԴ 28-րդ ընդհանուր ժողովում ՀՀ վարչապետ Արամ Սարգսյանի արտասանած ողջույնի խոսքի այն հատվածը, որը վերաբերում էր առաջիկայում ստեղծվելիք Սփյուռքի պետական կոմիտեն եւ Կրոնից գործերի խորհուրդը Դաշնակցությանը վստահելու մասին իր դիրքորոշմանը: Հայաստանում օրերս ստեղծվելու է Սփյուռքի հարցերով պետական կոմիտե, հայտարարեց վարչապետը եւ ավելացրեց, որ դրա «ղեկավարը լինելու է դաշնակցական եւ նրա ընտրությունն արդեն կատարված է»: (Ավելի ուշ նա լրագրողներին ասաց, որ նկատի ուներ Լեւոն Մկրտչյանին, որը ներկայումս Կրոնից գործերի խորհրդի նախագահի պաշտոնակատարն է, եւ սփյուռքի հարցերով վարչապետի խորհրդականը):

Հրանտ Բագրատյանը վարչապետի խորհրդական

Հանրապետության վարչապետ Արամ Սարգսյանը, ըստ **«Ազգի»** աղբյուրների, նախկին վարչապետ, «Ազատություն» կուսակցության նախագահ Հրանտ Բագրատյանին առաջարկել է ընդգրկվել իր ստեղծագործական թիմում՝ իբրեւ խորհրդական: Փաստենք, որ դեռեւս Վազգեն Սարգսյանի վարչապետության օրոք Հրանտ Բագրատյանին առաջարկվում էր էկոնոմիկայի եւ ֆինանսների ոլորտում որոշակի դերակատարում ունենալ: Բայց Վազգեն Սարգսյանի ստեղծագործական հարցերով խորհրդական նշանակվեց Արմեն Եղիազարյանը: Հրանտ Բագրատյանի թիմակիցը, նախկին էկոնոմիկայի նախարարը: Այսօր նա շարունակում է մնալ Արամ Սարգսյանի տնտեսական հարցերով խորհրդական: Փաստենք, որ Արմեն Եղիազարյանը, ինչպես եւ Հրանտ Բագրատյանը համարվում են ազատական գաղափարախոսության առաջին ալիքի ներկայացուցիչներ, իսկ այդ ալիքի գործունեությունը, ինչպես եւ Ռուսաստանում, հասարակության կողմից ոչ միարժեք է գնահատվում:

Ն. Դ.

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

81-ամյա ընդմիջումից հետո Հայաստանում մեկնարկեց ՀՅԴ ընդհանուր ժողովը

Կիրակի, հունվարի 10-ին Երեւանում, կառավարության նիստերի դահլիճում, պաշտոնական բացումը տեղի ունեցավ ՀՅ Դաշնակցության 28-րդ ընդհանուր ժողովի: Ինչպես նշեցին մի շարք հռետորներ, 1919 թ.-ից հետո սա ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովն է մայր հողում: Նախորդը՝ 25-րդը, ինչպես հիշում ենք, 1992 թ. ընդհատվել էր այն ժամանակվա նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից Հայր Մարուխյանի նկատմամբ արձակված արտաքսման հրամանագրի պատճառով: Այս փաստը եւ առհասարակ ՀՅԴ-ի նկատմամբ (միայն ՀՅԴ-ի՞) նախորդ վարչախմբի, մեղմ ասած, անհանդուրժողական վերաբերմունքին անդրադարձան գրեթե բոլոր հռետորները, որոնք ողջունեցին, ավելին պատմական որակեցին ներկա ժողովի Հայաստանում անցկացման փաստը: Արդարեւ, գոնե քաղաքական հանդուրժողականությունն առկա է այժմ մեր երկրում:

Օրվա հանդիսավար Վահան Հովհաննիսյանի կոչով ներկաները հոսանկայս ՀՀ պետական հիմնը եւ կուսակցության քայլերգը լսելուց հետո լռությամբ հարգեցին հայկական նորագույն ազատամարտում, ինչպես նաեւ հոկտեմբերի 27-ի արյունալի ոճրագործության զոհերի հիշատակը: Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպս. Կճոյանն Ամենայն հայոց կաթողիկոսի անունից հայրապետական մաղթանք հղեց ժողովականներին, որից հետո ՀՀ նախագահի խորհրդական Ռազմիկ Պավլոյանն ընթերցեց Ռոբերտ Քոչարյանի ուղերձը: «Հասկանալի է, որ տարիներ տեւած ընդմիջումից հետո Դաշնակցությունը կրկին անգամ իր ընդհանուր ժողովը գումարեց մայր հայրենիքում», շեշտում էր նախագահը: Նույն առիթով իր գոհունակությունը հայտնեց վարչապետ Արամ Սարգսյանը ժողովի Հայաստանում գումարվելու փաստը համարելով ներքին վիճակի հանգստության ապացույց:

Վարչապետը շնորհակալություն հայտնեց ՀՅԴ ներկայացուցիչներ Հրանտ Մարգարյանին, Վահան Հովհաննիսյանին, Վահե Հակոբյանին եւ «իմ սիրելի» Լեւոն Մկրտչյանին «կառավարությանը ծանր օրերին օժանդակելու համար»: «Միշտ ուրախ եմ ընդունել Դաշնակցության խորհուրդները, խորհրդակցել ձեզ հետ», եզրափակեց Արամ Սարգսյանը:

ՀՅԴ ընդհանուր ժողովը ողջունեցին նաեւ ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, որի ուղերձն ընթերցեց Օլեգ Եսայանը, եւ ՀՀ ԱԺ նախագահ Արմեն Խաչատրյանը, որին ներկայացնում էր ԱԺ փոխխոսնակ Գագիկ Ասլանյանը:

Այնուհետեւ խոսքը տրվեց կուսակցությունների ներկայացուցիչներին:

Տես էջ 2

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

Չոլեսք է լինի քաղաքական պարտություն

Մոր սամակը զոհված որդուն

1994 թվականի հունվարի 31-ին Քարվաճառի ստրատեգիական մեծ կարեւորություն ունեցող բարձունքը պահելով, զոհվեց Աշոտ Ռուդոլֆի Չախոյանը: Նրա անձնազոհ սխրանքը գնահատվեց կառավարական պարգեւով «Արիության մեդալով»: Արդեն 6 տարի մայրը վաստակաշատ ռադիոլրագրող Գոհար Մարտիկյանը, որդու անմահության ճանապարհը սկսած օրը նամակ է հղում նրան... Ահա 2000 թ. հունվարի 31-ի որդուն առաքած նամակը:

Բարեւ որդիս,

Նորից եկավ օրը քեզ նամակ գրելու: Քանի դեռ ձեռս գրիչ է բռնում ու քանի դեռ կամ, գրում եմ ու պիտի գրեմ քեզ: Հետո, ասես հետո, երբ ես չեմ կարողանա գրել, կգրեն բոլոր այն Աշոտները, որոնք ծնվել են քեզնից հետո եւ Աշոտ են կոչվել հենց քո պատվին:

Քեզ կորցրած ընկերներդ են իրենց արու զավակներին Աշոտ կոչել ու մի թոռուն հույս են փայփայում, որ նրանք էլ կլինեն քեզ նման գեղեցիկ, քեզ նման առնական, քեզ նման ընկերասեր ու հայրենասեր:

Առանց քեզ աղրած այս 6 տարիներն անցան քո անձնուրաց սխրանքի հիշատությունն ուսերիս ու հոգուս մեջ կրելով... Դժվար է առանց քեզ: Անասելի դժվար: Սակայն իմացիր, որդիս, որ ամեն անգամ ուժերս սպառվելիս կողքիս հայտնվում է մի ուրիշ Աշոտ: Արթուր, Արմեն, Արայիկ, Բասենցի, Ալբերտ կամ Սիեր անուններով, եւ կյանքի մի օրը, մի ժամը կամ գոնե մի պահն աղրում ինձ համար, քո փոխարեն...

Թող Աստված պահպանի աղրողներին, իսկ զոհված հերոսների փոխարեն նրանց անձնազոհության օրինակով աղրողները թող ունենան ամենակալ Աստծո օրհնությունը:

Մի տխրիր, որդիս: Այսօր նամակս մի փոքր թախծոտ երանգ ունի... Ես ավելի շատ ուզում էի պատմել, թե ինչպես քո Սպարապետը Վազգեն Սարգսյանը, Նուբարաշենի հատուկ գնդում, հեծախույզի օրվա առթիվ «Մարտական փառքի» դրոշը գնդի հրամանատարին հանձնելուց հետո, երկա՛ր-երկա՛ր կանգնեց քո «Փառքի անկյունում» մեծադիր նկարիդ առջեւ, մեզնից ծածկելով արցունքները: Սպարապետը, որ իր բոլոր զինվորներին գիտեր անուն առ անուն, քեզ ոչ միայն հիշեց (չհիշել չէր կարող), այլեւ դիտողություն արեց, թե ինչո՞ւ են գեղանկարում քեզ ավտոմատով պատկերել: Իսկ դու նոնա կածիգ-նետանառու հեծախույզ էիր... Չէր կարող չհիշել 93-ի օգոստոսյան քո սխրանքը Կոնձորում, չէր կարող չհիշել քո կամավոր մուտքը 94 թվականի հունվարյան թեժ մարտերի մեջ եւ, վերջապես, չէր կարող չհիշել, թե հենց 94 թվականի հունվարի 31-ին քո կյանքի գնով ինչպես փրկեցիր ոչ միայն հարյուրից ավելի ընկերներիդ, այլեւ այն օրերի քո հրամանատարի կյանքը: Կրծքով պահելով նվիրական հողիդ մի բարձունքը ժամուկես կռվեցիր բազմաքանակ թշնամու դեմ մենամենակ, փրկեցիր ընկերներիդ շրջապատման մեջ ընկնելու վտանգից ու... անմահացար:

Անմահներին հիշում են անուն առ անուն:

Անմահացած Սպարապետդ ոչ միայն հիշեց քեզ, այլեւ շշմեցրեց, դիտողություն արեց, երբ արդեն կուլ էր տվել արցունքներն ու հավաքել իրեն:

- Ինչո՞վ կարող ենք օգնել, հարցրեց ինձ եւ հորդ:

- Այսքիսի բանակով մենք պարտվելու իրավունք չունենք, դուրս թռավ ինձ բերանից:

Նա մեղմ հպարտությամբ ժպտաց:

- Միայն թե քաղաքական պարտություն չլինի, շարունակեցի ես:

- Չի լինի, հաստատապես ասաց նա:

Այ, այս մասին էի ուզում պատմել քեզ, տղաս: Պատմել եւ հուսադրել քեզ, որ դու կաս, աղրում ես մեզ հետ, մեր մեջ ու մեր կողքին: Դու արդեն գիտես նաեւ, որ Սպարապետիդ հոգին էլ վերեւում է, իր զինվորների կողքին: Բայց ոչ ես, ոչ դու եւ ոչ էլ Սպարապետդ չգիտենք... Չեղա՞վ արդյոք քաղաքական պարտություն:

Չի լինի, իհարկե, չի լինի...

Իսկ չլինելու համար այնքան քիչ բան է պետք:

Մի քիչ ավելի քիչ խոսենք ժողովրդավարությունից ու իսկական ժողովրդավար լինենք:

Մի քիչ ավելի քիչ խոսենք սխալ ընտրություններից ու ավելի ճիշտ ընտրություն կատարենք:

Մի քիչ ավելի քիչ խոսենք սխալ նախագահ ընտրելուց եւ ընտրվածի արժանիքները տեսնել կարողանանք: Նրան օգնել կարողանանք:

Եվ, վերջապես, մի քիչ ավելի քիչ խոսենք օրենքների անկատարությունից եւ հաստատագրված օրենքներին ենթարկվել կարողանանք:

Եվ, ամենակարեւորը, քեզ նման Աշոտներ շատ ունենանք, որ ոչ միայն կրծքով պահեն հայրենիքը, այլեւ քեզ նման աղրած ամեն օր, ժամը, պահը տոն դարձնել կարողանան:

Հանգիստ սավառնիր վերեւում, որդիս: Քո աղյուծասիրտ ոգին ինձ հետ է, հորդ հետ է եւ առավել եւս քո Արթուր եղբոր հետ է, որ աղրում է ճիշտ քեզ պես ուժեղ, գթասիրտ, հոգատար...

Աստված թող պահպանի բոլորիս, որպեսզի քո եւ քեզ նման հազարավոր հերոսների այդքան թանկ կյանքի գնով ձեռք բերված եւ կայունանալու փորձեր անող մեր հայրենիքում

«... Բացվեն դռներն հուսոյ, եւ մեր երկրէն փախ տայ ծնեռ...»:

Մայրդ՝ ԳՈՀԱՐ ՄԱՐՏԻԿՅԱՆ-ՉԱԽՈՅԱՆ

31.01.2000 թ.

81-ամյա ընդմիջումից հետո Հայաստանում մեկնարկեց ՀՅԴ ընդհանուր ժողովը

Սկիզբը էջ 1

ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարյանի կարծիքով, որքան շուտ կուսակցությունն ամրապնդվի, ավելի դեպի կարող է պատկերացնել պետության ու հասարակության խնդիրները, իսկ «գաղափարական նույն պայմաններից ծնունդ առած» ՀՀԿ-ի եւ ՀՅԴ-ի միջեւ համագործակցությունը Ամ-ում եւ նրանից դուրս անհրաժեշտ է շարունակել: Ամ «Իրավունք եւ միաբանություն» խորհրդարանական խմբակցության նախագահ Արտաշես Գեղամյանի քաղաքական ելույթի գլխավոր միտքն այն էր, որ իշխանությունները երկիրը ստեղծված իրավիճակից դուրս բերելու անհրաժեշտ քայլերը չեն անում, մինչդեռ Կոմկուսի ներկայացուցիչ Գագիկ Թադեւոսյանն իր կուսակցության եւ ՀՅԴ-ի միջեւ դերաբաշխում կատարեց «Սփյուռքում դուք, Ուսաստանում մենք» սկզբունքով:

Ամ կողմից խոսեց Դավիթ Վարդանյանը: «Առաջին անգամն է, որ տեսնում եմ ՀՅԴ ընդհանուր ժողով», ասաց նա եւ ընդգծեց, որ «Դաշնակցությունը սոսկ Հայաստանում գործող բազմաթիվ կուսակցություններից մեկը չէ, այլ ազգային ոգեւորություն»: Նա շնորհակալություն հայտնեց Դաշնակցությանը հատկապես 1996 թ. նախագահական ընտրություններին Ամ հետ ամուր դաշինք կազմելու համար:

«Օրինաց երկիր» կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի ողջույնի խոսքից հետո ձայնը տվեց ՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանին, որը վերհիշեցնելով ազգային հիմնարար հարցերի լուծման ուղղությամբ «մեր ժողովրդի նորագույն պատմության ընթացքում ավանդական կուսակցությունների համատեղ գործողության փաստերի» մասին, կարեւորեց Հայ դատի հետապնդման ուղղությամբ ՈԱԿ-ՀՅԴ համատեղ ջանքերը եւ պատրաստակամություն հայտնեց դրանք շարունակելու, քանզի, ասաց նա, Հայ դատը պատմական կամ բարոյագիտական հասկացություն չէ, ինչպես փորձում էին քարոզել ՀՀ նախորդ իշխանությունները, այլ ազգային ռազմավարական խնդիր: Նա ցավով նկատել տվեց, որ այսօր էլ նկատելի են թուրքերի հետ գրկախառնվելու տրամադրություններ, երբ Հայաստանի քաղաքներից մեկը փորձում է իրեն քույր քաղաք հռչակել Դարսի հետ:

Իր առանձին ելույթում Վ. Հովհաննիսյանը համաձայն գտնվեց Դ. Վարդանյանի հետ, որ ՀՅԴ-ն «պատկանում է ողջ հայ ժողովրդին»: Այսօր, ասաց նա, մենք պետականության մաս ենք կազմում, իսկ դա ավելի դժվար է, քան լինել բարիկադի մյուս կազմում: Դժվար է լինել իշխանության մեջ եւ բերել լավը, ոչ թե կուլ գնալ: Մենք միշտ մերժել ենք գրպանի կուսակցություն լինել, ասաց հռետորը, եւ այսուհետեւ էլ քնավ չենք դառնա:

Վերջում ծրագրային ելույթով հանդես եկավ ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Բենո Թոնդյանը, որով եւ ավարտվեց 28 ընդհ. ժողովի հանդիսավոր մասը:

Ըստ լուրերի, ընդհանուր ժողովը այսուհետ կշարունակվի դռնփակ, Ծաղկաձորի գրողների հանգստյան տանը, եւ կտեւի շուրջ 10 օր, որի ավարտին կընտրվի նոր բյուրո:

ԳՈՒՅԺ

Մահացավ Լաերտ Վաղարշյանը

Երեկ, հունվարի 31-ին, երկարատեւ ծանր հիվանդությունից հետո վախճանվեց հայտնի կինոռեժիսոր, Հայաստանի ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Լաերտ Վաղարշյանը:

Լաերտ Վաղարշյանը որդին էր Վաղարշ Վաղարշյանի: Նա բեմադրիչն է մի շարք հայտնի գեղարվեստական եւ վավերագրական կինոժապավենների, որոնց թվում՝ «Առաջին սիրո երգը» (Յու. Երզնկյանի հետ համատեղ), «Քառոս», «Մարտիրոս Սարյան» եւ այլն:

ՀԱՄԱՌՈՏ

Վաղը Հայաստան կժամանի Սլովակիայի պատվիրակությունը

ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 2-ին պաշտոնական այցով Հայաստան կժամանի Սլովակիայի Հանրապետության պատվիրակությունը՝ արտգործնախարար Էդուարդ Կուկանի գլխավորությամբ: Այցի շրջանակներում Սլովակիայի արտգործնախարարը կհանդիպի ՀՀ նախագահի, Ազգ նախագահի, վարչապետի, արտաքին գործերի, առեւտրի եւ արդյունաբերության, էկոնոմիկայի նախարարների հետ: Պատվիրակությունը Մայր աթոռ Սբ. Էջմիածնում կհանդիպի Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ, կայցելի Օիծեռնակաբերդ ու ծաղկեպսակ կդնի եղեռնի զոհերի հուշարձանին, կայցելի նաեւ Մատենադարան: ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից «Նոյյան տաղանին» հայտնեցին, որ այցի շրջանակներում նախատեսվում է ստորագրել առեւտրա-տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության մասին հայ-սլովակյան միջկառավարական համաձայնագիր, ինչպես նաեւ արձանագրություն երկու երկրների արտգործնախարարությունների միջեւ համագործակցության մասին: Պատվիրակությունը Հայաստանից կմեկնի փետրվարի 4-ին:

Հիմք է դրվում առողջապահության պարտադիր ապահովագրության

ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իր գործունեությունը կվերսկսի Առողջապահության գործակալությունը՝ փակ բաժնետիրական ապահովագրական գործակալություն վերանվանումով: Այս մասին ասաց Ամ առողջապահության, սոցիալական ապահովության եւ բնության պահպանության հանձնաժողովի նախագահ Գագիկ Թորոսյանը, նշելով, որ յուրաքանչյուր քաղաքացու համար պետությունը գործակալությանը ամիսը կհատկացնի կես դոլար (2000 թ. բյուջեում նախատեսվում են այդ գումարները), նույնքան էլ պետք է վճարի քաղաքացին: Արդյունքում՝ կսկսի գործել պարտադիր ապահովագրության համակարգը: Գ. Թորոսյանը նշեց նաեւ, որ խնդիր է դրվել նախաբուժարանները (խոսքը պոլիկլինիկաների մասին է) բոլոր սոցիալական շերտերի համար դարձնել հասու: Մարզային պոլիկլինիկաներն արդեն այս տարվանից կգործեն այդ սկզբունքով: Բացի այդ, ստացիոնար անվճար բուժման կանցնեն Հանրապետական եւ թիվ 1 մանկական հիվանդանոցները:

Չեն կարողանում վճարել ջեռուցման վարձը

Ինչպես տեղեկացրեց Արտաշատի քաղաքապետ Վարդգես Հովակիմյանը, քաղաքի երկու կաթսայատները պատրաստ են վերագործարկման, սակայն բնակչության անվճարունակության հետեւանքով ջեռուցում չի իրականացվում: Վերջին մի քանի տարիներին բնակչության ջեռուցման պարտքը հասնում է շուրջ 120 մլն դրամի: Քաղաքապետարանը վառելիքով ապահովել է սոցիալապես անապահով, զոհված ազատամարտիկների, հաշմանդամների ընտանիքներին: Քաղաքապետը հավաստեց, որ ֆինանսական միջոցների առկայության դեպքում կարվի ավելին: Քաղաքի բյուջեն անցյալ տարի հաշվարկված էր 148 մլն դրամ, որից 33 մլն դրամը պետք է հատկացվեր որպես լրավճար: Սակայն մինչեւ օրս հատկացվել է 11 մլն դրամը: Դրա հետեւանքով ուշանում է բյուջետային կազմակերպությունների աշխատավարձը:

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿՅԱՆ

Լոռում գյուղական ուսուցիչները կերթեւեկեն անվճար

ՎԱՆԱՁՈՐ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը գյուղական դպրոցներում աշխատող ուսուցիչներին եւ Վանաձորի բուհերում սովորող ուսանողներին սոցիալապես օժանդակելու նպատակով, հանդես է եկել նախաձեռնությամբ: Նրա առաջարկով, միջհամայնքային երթուղիներում վարորդներն ուսուցիչներից փոխադրավարձ չեն գանձելու: Այդ ուսուցիչներին անվճար երթեւեկության համար կտրամադրվեն մարզպետի կողմից հատուկ վկայականներ: Իսկ Վանաձորի ներքաղաքային տրանսպորտում 20 դրամով իջեցվել է ուսանողների փոխադրավարձը:

Նշենք, որ Վանաձորում հասարակական փոխադրամիջոցների ուղեվարձն այսօր 50 դրամ է:

Դարձյալ երկարաձգվել է

ՀՀ ՆԳՆ պետավտոտեսչության վարչությունից տեղեկացրին, որ տրանսպորտային միջոցների «ԱՐ» սերիայի պետհամարանիշների փոխանակումը երկարացվել է մինչեւ 2000 թ. մարտի 1-ը: Հետագայում հերթերից խուսափելու համար վարորդներին խորհուրդ է տրվում չսպասել մինչեւ ժամկետի վերջը: Իսկ այն վարորդները, ովքեր մինչեւ նշված ժամկետը չեն փոխանակի իրենց տրանսպորտային միջոցների պետհամարանիշները, կենթարկվեն վարչական պատասխանատվության:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային ծաղրաթերթ
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՊՄԲԱՑԻԿ

Բյուջեի ինարկումներից ակնկալում են կադրային փոփոխություններ

Այսօրվանից ԱԺ-ում կսկսվի բյուջեի նախագծի ոդիսականը հանձնաժողով առ հանձնաժողով, որից հետո հաջորդ երկուշաբթի, երբ կբացվի խորհրդարանական նոր նստաշրջանը, բյուջեի նախագիծը կդառնա օրակարգային ինարկման ենթակա: Վարչապետ Արամ Սարգսյանի ստորագրությամբ ԱԺ առաջադիմում նշված է, որ բյուջեի օրենքի նախագիծը ինարկելիս կառավարության պաշտոնական ներկայացուցիչ է նշանակված ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը: Լեւոն Բարխուդարյանի աստեղային ժամը մեկնարկում է, թեեւ դատելով պատգամավորների տրամադրությունից կարելի է դյուրավ կանխատեսել, որ ֆինանսների նախարարին սպասում է ծանր փորձություն: Երեկ ԱԺ «Միասնություն» խմբակցությունը նիստ գումարեց նախնական որոշելու բյուջեի ինարկումների մարտավարությունը, եւ տրամադրությունները բնավ մեղրածոր հիացական չէին: «Միասնությունը» պատրաստվում է լուրջ ինաղատությամբ հանդես գալ, որի ենթատեքստում նաեւ կառավարության կազմի ենթադրելի փոփոխություններն են: «Միասնությունը» եւ ՀԺԿ, եւ ՀՀԿ թեւերով կարծում է, որ կառավարության կազմում իր ներկայությունը բավարար չէ, ուստի փետրվարի երկրորդ կեսին նախատեսվող նախարարների փոփոխության դեպքում կուսակցությունները կարող են հնարավորություն ստանալ ներգրավվելու գործադիր իշխանության մեջ: Այս կառավարությունը, որը փաստացի բացի առեւտրի եւ արդյունաբերության նախարար Հայկ Գեւորգյանից, Վազգեն Սարգսյանի ընտրած կազմն է, կուսակցական համարել իրոք դժվար է ընտրված էին հիմնականում նախորդ կառավարություններում փորձառության եւ պաշտոնականության շրջան ապրած գործիչներ: Պատահական չէ, որ «Միասնության» հաստատությամբ ՀՀԿ անդամներ ինաղատում են նախորդ վարչապետների ժառանգությունը եւ տնտեսական բոլոր ծախողումները բացատրում ներկա թիմում նրանց գոյության փաստով:

Տուգանային եզրագծին ամենամոտն են կանգնած տրանսպորտի, փոստի եւ հեռահաղորդակցության, էներգետիկայի, էկոնոմիկայի նախարարությունները: Առաջին պարագայում վճռորոշ կարող է լինել ԱԺ-ում գործող եւ 91-99 թթ. Հայաստան էներգակիրների ներկրման օրինականությունն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունը: Հանձնաժողովը ղեկավարում է ՀՅԴ խմբակցության անդամ Դավիթ Լոիյանը, հետեւաբար հանձնաժողովն անդայման կփորձի քաղաքական եզրահանգումներ կատարել եւ իրական գործերի հետ մեկտեղ նախորդներին տալ քաղաքական գնահատական բացառելով նրանց հետագա պաշտոնային առաջընթացը: Կա տեսակետ, ըստ որի կարելի է միավորել տրանսպորտի եւ փոստի ու հեռահաղորդակցության նախարարությունները:

Էկոնոմիկայի նախարարի պարագայում տնտեսական ռազմավարության հստակ տարբերություն կա: Արմեն Դարբինյանը ոմանց կողմից ընկալվում է իբրեւ ծախողված տնտեսական քաղաքականության գաղափարակիր, թեեւ Արմեն Դարբինյանի այլընտրանքը դեռեւս որոշված չէ, ինչի ապացույցն ԱԺ-ին ներկայացված բյուջետային ուղերձն է: սկզբունքային անհրաժեշտ է խստագույնս կշռել եկամուտների ավելացման ցանկացած առաջարկ»: Կարելի է հուսալ, որ պետությունը մի մեծ հարկային տեսչության վերածելու ձգտումը սանձվելու է:

Առաջին անգամ բյուջետային ուղերձում ամրագրված է պետական, ազգային, տնտեսական անվտանգության գործուն համակարգերի ստեղծումը որպես օրվա հրամայական. «Անհրաժեշտ է հրաժարվել երկ-

2000 թ.-ի պետբյուջեի նախագիծը հանձնվեց ԱԺ դատին

Հայաստանի տնտեսական արեւը բավականաչափ սառն է

2000 թ.-ի պետբյուջեի նախագիծը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման եւ հարկաբյուջետային քաղաքականության ուղերձով. բացատրագրով. ինչպես նաեւ այդ նախագծի վերաբերյալ Կենտրոնական բանկի եզրակացությամբ. երկվանից ԱԺ-ում է: Խորհրդարանում եռուզեռ էր. եւ պատգամավորները հստակորեն բղբաթանակներով այս տարվա արեւի ջերմությունն էին ուզում ստուգել. գտնելու իրենց տեղը լուսատուի ներքո: Շաբաթ օրվանից խորհրդարանում գտնվող բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները դարձյալ փոփոխված են: Ըստ այդմ. մեր հանրապետությունը նախատեսում է հավաքել 201.8 մլրդ դրամի եկամուտ. ծախսել 254.1 մլրդ. բյուջեի պակասուրդը կազմում է 52.3 մլրդ: 2000 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է աղահովվի 5 տոկոս սղաճ:

էներգետիկայի ոլորտում ծախողումները եւս ակնհայտ են: 99-ի ամռանը պարտքերի վերակառուցում-հեռաձգումից հետո էներգետիկ համակարգը շարունակում է մեծացնել պարտքերի իր բեռը: Որոշակի դժվարություններ կան էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման ժամանակացույցում, ինչը հարուցում է բյուջեի հիմնական դոնոր կազմակերպության ՀԲ-ի դժգոհությունը:

Միայն բյուջեով տնտեսական կյանքում բեկում չիք

Բյուջետային ուղերձն անկեղծ է. երկիրը չի կարող հույս դնել պետբյուջեի վրա եւ այդպիսով ակնկալել նվազագույն աղահոված կեցություն: «Հնարավոր չէ այլեւս երկրի տնտեսական կյանքում որպես բեկում մտցնելու հիմնական ռեսուրս դիտարկել պետբյուջեն եւ նրանում կատարվող ոլորտային վերաբաշխումները»: Ըստ «Ազգի» աղբյուրների, բյուջետային ուղերձի կազմման ընթացքում մեծ է եղել վարչապետի տնտեսական հարցերով խորհրդական Արմեն Եղիազարյանի դերակատարումը:

Բյուջեին տրվող կառավարական բնութագրումները հայտնի են. «կոշտ, իրատեսական, նպատակային եւ անդայման կատարելի»: Հարկերի հավաքագրմանը վերաբերող հատվածում նշված է, որ ուղղակի կամ անուղղակի այլեւս չի ավելանալու հարկային ճնշումը տնտեսվարող սուբյեկտի վրա: Կա կարեւոր մի հատատագրում. «2000 թ.-ին, ի տարբերություն նախորդ տարիների, բյուջետային եկամուտների ծրագրվող ծավալի մակարդակն այլեւս չի դիտարկվելու որպես նպատակ: Այս հարցում ՀՀ ԱԺ աջակցությունը կառավարությունը համարում է ռահաղորդակցության նախարարությունները:

Էկոնոմիկայի նախարարի պարագայում տնտեսական ռազմավարության հստակ տարբերություն կա: Արմեն Դարբինյանը ոմանց կողմից ընկալվում է իբրեւ ծախողված տնտեսական քաղաքականության գաղափարակիր, թեեւ Արմեն Դարբինյանի այլընտրանքը դեռեւս որոշված չէ, ինչի ապացույցն ԱԺ-ին ներկայացված բյուջետային ուղերձն է:

Առաջին անգամ բյուջետային ուղերձում ամրագրված է պետական, ազգային, տնտեսական անվտանգության գործուն համակարգերի ստեղծումը որպես օրվա հրամայական. «Անհրաժեշտ է հրաժարվել երկրի ազգային անվտանգության եւ ներքին գործերի համակարգերի ֆինանսավորման «մնացորդային» սկզբունքից աղահովելով ոչ միայն նշված համակարգերի կառուցվածքների վերափոխումների եւ թվաքանակի օպտիմալացման իրականացումը, այլեւ դրանց տեխնիկական վերազինումը»: Իբրեւ ծրագրային նպատակ շեշտված է նաեւ կառավարության կողմից կուսակցությունների օժանդակման համապարփակ խնդիրը, որի հիմքում պետք է դրվի կուսակցությունների մասին ՀՀ օրենքի նախագիծը: Ներկա կառավարությունը կուսակցությունները համարում է քաղաքական դեմոկրատիայի հենք, ինչը բավական հուսադրող հագամանք է: Շարունակվելու է նաեւ զանգվածային լրատվամիջոցներին պետական աջակցության քաղաքականությունը: Կոռուպցիայի դեմ պայքարը համարվում է առաջնային քայլ պետական համակարգերի բարեփոխման ճանապարհին: Իսկ այդ բարեփոխումը նշանակում է ոչ միայն պետական ծառայողների ուռճացված թվաքանակի կրճատում, այլեւ ընտրվի իշխանությունների լիազորությունների ընդարձակում, միաժամանակ ընտրողների հանդեպ նրանց պատասխանատվության բարձրացումը: Ի մասնավորի «ոչ արդյունավետ գործող համայնքների ղեկավարների ժողովրդի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության կանչելու քաղաքականություն»:

Առաջին անգամ բյուջետային ուղերձում անդրադարձ կա Հայաստանում արհմիութենական շարժման եւ արհմիություններին ցուցաբերելիք պետության աջակցությանը: Իսկ «շան գլուխն» ամփոփված է 16-րդ կետում, տնտեսվարող սուբյեկտներում վարվող ֆինանսական ստուգումների համակարգը պարադիր կարգավորվելու է: Ստուգումները, որոնք դարձել են կոռուպցիայի հիմքը եւ համընդհանուր մրցակցության դեմ, այսուհետ կանոնակարգվելու են. «Պետք է բացառել պետական հարկային մարմիններից բացի պետական (այդ թվում իրավապահ) մարմինների ներգրավումը նման ստուգումների գործընթացում... Հարկային տեսուչը տնտեսվարող սուբյեկտի համար պետք է լինի գործընկեր, եւ նոր միայն ստուգող եւ խախտումներ բացահայտող»:

Իբրեւ մարտավարություն այս սկիզբը կարելի է հուսադրող համարել, եթե չլիներ անցյալի տխուր փորձը, երբ ուղերձում ճշմարտությունները ամրագրվում են, բայց իրական քաղաքականության մեջ անտեսվում:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Ի՞նչ են ասում սոցիալիստամետ ուժերը

Սոցիալիստամետ ուժերը ներկայացնող 4 կուսակցություն, միավորվելով «Արդարություն» դաշինքի ներքո, մի քանի ամիս առաջ հիմնեցին նաեւ իրենց օրենսդիր կառույցը՝ սոցիալիստական խորհրդարանը: Վերջինի ստեղծումը, փաստորեն, հնարավորություն էր հիշյալ ուժերին՝ ներկայանալու որպես մեկ ամբողջություն եւ իրենց ձայնը լսելի դարձնելու գաղափարական համակիրներին: Խորհրդարանի պատվիրակները, որոնք, պարբերական նիստեր գումարելով, իրենց կուսակցությունների անունից ներկայացնում են երկրում տիրող քաղաքական ու տնտեսական վիճակի գնահատականը, նաեւ փաստաթղթեր են մշակում: Դրանք, բնականաբար, չունեն իրավական ուժ, սակայն դաշինքի խոսափողն են, որը ցանկացած պարագայում հստակորեն հրապարակում է սոցիալիստամետ ուժերի տեսակետը:

Իսկ սոցիալիստամետ ուժերն, անշուշտ, դժգոհ են տիրող իրավիճակից, քանզի, ինչպես նշեցին, «ժողովրդավարություն կոչվածը ոչինչ չարժե, եթե ժողովուրդը դժվարությամբ է գոյատեւում»: Չմանրամասնելով այն միտքը՝ Հայաստանում ժողովրդավարություն կա՞ իրականում, թե ոչ (քանզի այդ ամենը չափազանց վիճելի է), վերադառնանք փաստաթղթին, որը պարունակում է վերջին տասը տարվա՝ երկրին «բաժին հասած» անցուդարձերի վավերացումը եւ առաջիկայում, թերեւս, հրապարակվի: Ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակի համար մեղավորության սկզբնաղբյուր համարելով նախորդ վարչակարգի աղազգային քաղաքականությունը՝ սոցիալիստամետ ուժերը համաձայնության հանգեցին այն հարցում, որ ներկայիս ղեկավարությունն էլ, սակայն, չնպաստեց այդ իրավիճակի բարելավմանը: Արդյունքում՝ էլ ավելի խորացավ փոխըմբռնողության բացն իշխանությունների եւ ժողովրդի միջեւ՝ հասնելով վերջինի գրեթե լիակատար մեկուսացմանը: Ժողովուրդը, որ, ըստ նախընտրական խոստումների, պիտի դառնար նոր ղեկավարության կուսակցությունը, որպես այդպիսին, փաստորեն, «առիթ» չունեցավ հանդես գալու, այդ առիթը պարզապես չտրվեց:

Ընդդիմադիր քաղաքական դաշտի մյուս ուժերին անդրադառնալով՝ սոցիալիստական խորհրդարանը բացասական գնահատեց այդ դաշտի խայտաբղետությունը, որոշ ուժերի համար ընդդիմախոսությունն այսօր սոսկ դիմակ է՝ ինչ-ինչ դրդապատճառներ ու նպատակներ թաքցնելու: Դրանով էլ բացատրվում է հիշյալ ուժերի պարբերական աշխուժությունը ոչ պատահական պահերին, որոշակի իրավիճակներում:

Ա. Ա.

«ՎԱՆՈ+11» ԳՈՐԾ

Միմյանց հաջորդող հայտարարություններ, որոնք չեն առնչվում դատավարությանը

Սկիզբը էջ 1

«... երբ օրեր շարունակ նիստերից բացակա Սուքիասյան, Ռաֆայելյան եւ Բալայան տուժողները միատեղ ներկայացան ու պահանջեցին Վանո Սիրադեղյանի խափանման միջոցը պարտադիր փոխարինել կալանքով, պաշտպանական կողմի համար մի ավելորդ անգամ հասկանալի դարձավ, որ դատարանի նկատմամբ որոշակի ուժերի կողմից ճնշում է գործադրվում...», նշեց դատապաշտպանն իր հայտարարության մեջ:

Երեկվա դատական նիստում մի հայտարարությանը հաջորդում էր մյուսը, մեկից բխում էր մյուսի հայտարարությունը, եւ դատավարության մասնակից գրեթե բոլոր կողմերը՝ սկսած նախագահողից, առանձին հայտարարություններով հավաստեցին, որ ոչ ոք ճնշում չի գործադրում իրենց վրա, կամ ոչ մեկի ազդեցության տակ չեն գտնվում: Մասնավորապես, պետական մեղադրող Աղվան Հովսեփյանը Վանյա Սուքիասյանի հայտարարությունը որակեց «ցուցադրական-միտինգային ելույթ, որն ավելի շատ ուղղված է զանգվածային լրատվամիջոցներին, քան դատարանին», որովհետեւ հայտարարություններն այնքան էլ բնորոշ չեն դատարանին: Նախագահողը դատավարությունը բնական հունի վերադարձնելու փորձ արեց, այսինքն՝ Սուքիասյանին առաջարկեց շարունակել իր հարցերը ամբաստանյալ Վահան Հարությունյանին: Սակայն, ինչպես ցույց տվեց նիստի հետագա ընթացքը, դատապաշտպանը ցանկություն չուներ առաջնորդվելու իրեղատավարական օրենսգրքի պահանջներով եւ հարցերը շարունակել ընդհատված տեղից: Նրա հարցերը կարելի է որակել «դարձ ի շրջանս յուր», որովհետեւ զբաղեցնելով վերջին երեք դատական նիստերը «ղեկավարողի» դերը՝ դատապաշտպանը մշտապես կրկնեց նախորդ նիստերում տված հարցերը: Ընդգծենք նաեւ, որ նրա հարցերն առնչություն չունեին իր պաշտպանյալի, ինչպես նաեւ այդ գործով դատապարտվող ամբաստանյալներից որեւէ մեկի մեղադրանքի հետ:

Մեղադրող կողմն ու դատապաշտպանները անհանգիստ շարժումներով, երբեմն էլ բարձրաձայն դիտողություններ էին անում՝ նախագահողից ակնկալելով դիրքորոշում ցուցաբերել, ինչը Վանյա Սուքիասյանի կողմից գնահատվում էր Վահան Հարությունյանի ակնհայտ կողմնորոշելու փորձ, «որի հետեւանքով ամբաստանյալը խուսանավում է հարցերին պատասխանելուց»: Դատապաշտպանին արվող հաջորդ դիտողությունն այն էր, որ նա հարցերը ձեւակերպելիս ընդարձակ մեջբերումներ էր կատարում Վ. Հարությունյանի նախաքննական ցուցմունքներից, ինչի իրավունքը չուներ: Վանյա Սուքիասյանը դա բացատրում էր Վահան Հարությունյանի ցուցմունքներում առկա հակասություններով, սակայն «մոռանում էր», որ Վահան Հարությունյանի հարցաքննությունը դեռեւս չի ավարտվել, որից հետո միայն դատարանը կարող էր որոշում ընդունել եւ հրապարակել ամբաստանյալի նախաքննական այն ցուցմունքները, որոնք հակասում են դատարանում տված ցուցմունքներին: Սա քրեադատավարական օրենսգրքի պահանջն է, սակայն չգիտես ինչու, նախագահողը հաղաղում է կոչ անել մասնակից կողմերին՝ իրենց գործունեությունը ծավալել օրենքի շրջանակում: Նախագահողի այդ ներողամտությունն իր վերաբերմունքով չեզոքացրեց Վահան Հարությունյանը՝ հրաժարվելով պատասխանել մեղադրանքին չառնչվող հարցերին: Նա դատապաշտպանին խնդրեց իր նախաքննական ցուցմունքները մեջբերել նույնությամբ՝ «նկատում եմ իմ իսկ խոսքերի միտումնավոր խեղաթյուրում»: Երեկ Վանյա Սուքիասյանը մեկ անգամ էլ ցանկացավ հավաստիանալ՝ Վահան Հարությունյանը պաշտպանո՞ւմ է վերջին դատական նիստից հետո որոշ թերթերում տեղ գտած հայտարարությունը՝ «Վանո Սիրադեղյանն ինձ սպանություններ չի պատվիրել, ոչ էլ հանձնարարել է»: Նախադասության շարունակությունն այսպիսին էր. «Խոսքը գնացել է 94 թ. հունվարի 24-ի մասին, որ երկու տղաները պետք է գնդակահարվեն», ինչը եւ բաց է թողնվել մամուլի հրապարակումներում: Երեկ կրկնեց. «Այո, սպանության հրաման չի տվել, գնդակահարելու հրաման է տվել»:

Առաջիկա երկու շաբաթներին, մինչեւ փետրվարի 14-ը դատարանի դահլիճը կտրամադրվի Արմեն Տեր-Սահակյանի ու նրա գլխված խմբի դատավարությանը, իսկ այդ ընթացքում, հուսով ենք, ամբաստանյալները կհասցնեն աղաֆինվել, որոնց հիվանդության պատճառով էլ երեկվա նիստը վաղաժամ ընդհատվել էր:

ԱԶԳ

Հարցազրույց

Ղարաբաղն այսօր այլընտրանք չունի

Հարցազրույց ԼՂՀ նախագահի քաղաքական հարցերով խորհրդական Մանվել Սարգսյանի հետ

– Անցած օրերին Հայաստանի հասարակության մեջ մեծ հետաքրքրություն առաջացավ Լեռնային Ղարաբաղի ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ: ԼՂՀ զարգացումներին տրվող իրաժեշտ գնահատականները տագնապ են հարուցում: Չեր տեսակետն այս առթիվ:

– Իսկապես, ԼՂՀ-ում փոփոխությունները ավելի ու ավելի զանգվածային բնույթ են ընդունում: Ղարաբաղյան պատերազմի վետերանների վարը վերջին օրերին ապացույցն է, որ Լեռնային Ղարաբաղի հասարակությունն ընտրության առաջ է: Բնական է, որ ԼՂՀ-ում սոցիալական նման մասշտաբային երեւույթներին համընդհանուր թելադրանքի մթնոլորտը պահելու համար: Սա բերում է հասարակության եւ բանակի հակասությունների ուժեղացման, ինչպես նաեւ կանոնակարգի թուլացման հենց բանակում: Խաղաղության կորսի վախը եւ այդ մարդկանց հանդեպ սարսափը բոլորին սթափում էին համերաշխ լռել, իսկ այդ ընթացքում անօրինականության կազմակերպված համակարգն ավելի ու ավելի մասշտաբայնորեն էր իրագործվում: Հայաստանում էլ իշխանությունների թուլացումը վերջին տարիներին նպաստում էր այդ զարգացումներին: Ղարաբաղցիները սթափված էին ընտրություն անել:

– ԱԺՄ առաջնորդ Վազգեն Սանուկյանն իր վերջին ասուլիսում ԼՂՀ-ում հասարակությունն ու քաղաքական համակարգը հիմնականում նույն խնդիրներն ունեն, ինչ վերջիններս Հայաստանում: Մեզ թվում էր, թե Հայաստանում հնարավոր է կանների գոյությունը, Ղարաբաղում ոչ, թե Հայաստանում կան անքարեխիղճ քաղաքական գործիչներ, իսկ ԼՂՀ-ում միայն հերոսներ: Հեշտաբար բնական էր, որ հայտնվեցինք նման իրավիճակում, երբ Հայաստանում կլանների բացակայության եւ ժողովրդավարության հաստատման ցնցագողները երբեմն դառնում են Ղարաբաղյան կլանների ամենամտերիմ քաղաքական գինակիցները: Բայց առավել վատն այն է, որ Հայաստանում Ղարաբաղյան բոլոր գործընթացները մենք սովորաբար գնահատում ենք բացառապես մեր ստեղծած պատկերների տրիզմայով: Անցած 10 տարիներին հարաբերակայնության բացակայության պայմաններում հայկական ներին քաղաքականության մեջ Լեռնային Ղարաբաղը, փաստորեն, վեր է ածվել «մութ անցքի», որտեղ Հայաստանի շատ անբարեխիղճ գործիչներ աշխատել են թաքցնել իրենց քաղաքական անզորության ծայրերը: Իսկ Լեռնային Ղարաբաղում համաստաված լռության ուխտի պայմաններում չտեսնված հնարավորություններ ստեղծվեցին քաղաքական սոցիոլոգիայի համար: Այս ամենի կարեւոր հետեւանքներից մեկը եղավ Հայաստանում Ղարաբաղյան գործընթացների աղավաղված ընկալման մթնոլորտի առաջացումը, ինչը ժամանակի ընթացքում մեծացրեց մարդկանց եւ դեմքերի մասին կարծիքների եւ իրականության անհամապատասխանությունը: Պատահական չէ, որ ԼՂՀ-ում ներկա մեծ փոփոխությունների փուլը Հայաստանում արժանանում է իրարամերժ որակումների՝ ի հայտ բերելով հասարակության բացակայության շրջանի բոլոր արատները: Քաղաքական գործիչներն ու լրագրողները ցանկանալով բոլոր փոփոխություններում տեսնել ծանոթ շարժառիթներ, սկսեցին Ղարաբաղյան իրադարձությունները վերարտադրել հայաստանյան ստերեոտիպներով:

– Իսկ ի՞նչ է ընկած ԼՂՀ ներկա իրավիճակի հիմքում: Պարզ է, որ խնդիրը միայն բարձրաստիճան անձանց փոխհարաբերությունների մեջ չէ:

– ԼՂՀ-ում Հայաստանի նմանությամբ «Երկրապահ» միության քաղաքականացումը մեծ հուզումներ է առաջ բերել հասարակության մեջ, բայց ԼՂՀ-ում, ի տարբերություն Հայաստանի, պատերազմի շատ վետերաններ խիստ բացասաբար վերաբերվեցին կազմակերպության ղեկավարության ծրագրերին աջակցել ընդդիմադիր գործունեություն ծավալող Ղարաբաղյան բանակի նախկին հրամանատար Մանվել Բաբայանին: Միության քաղաքականացման դեմ բողոքի արտահայտում «Երկրապահից» հեռացան շատերը, ձեւավորվեց նոր արտախնդրական «Արցախյան պատերազմի վետերանների միությունը»: ԼՂՀ կառավարությունը ողջունեց վետերանների նման որոշումը: դատապարտելով քաղաքական նոտաակներով վետերանների հեղինակությունը շահագործելու փորձերը, ինչը, ինչպես երեւում է, դուր չեկավ «Երկրապահի» ղեկավարությանը: Այս ամենը առաջ բերեց նյարդային իրավիճակ Լեռնային Ղարաբաղում: Բայց այսօր արդեն պարզ է դառնում, որ իշխող զինվորների հեղինակությունը պատվար դարձնելն անթույլատրելի է: ԼՂՀ պաշտպանության նախկին նախարարի գործունեության արդյունքում առաջացած պրոբլեմները ժամանակին հետեւանքն էին բանակը սվերային քաղաքականություն եւ տնտեսություն ներքաշելու վերջինիս հակվածությունը: Իսկ այսօր փաստորեն նման մեթոդները փորձում են փոխարինել ընդդիմադիր գործունեության ասպարեզ:

– Ինչո՞վ է պայմանավորված նման լուրջ զարգացումների պահին ղարաբաղյան լիդերների հայտարարությունների բավական էմոցիոնալ տոնը: Այսպես, ելնելով մամուլի հրապարակումներից, Ս. Բաբայանը «Երկրապահի» համագումարի իր ելույթում հայտարարել է, թե ցավում է, որ ժողովուրդը մնաց նույն ստրուկը, ինչ եւ կար: Պակաս էմոցիոնալ չեն նաեւ ԼՂՀ նախագահ Ա. Ղուկասյանի՝ իր ընդդիմախոսներին տված գնահատականները մամուլում: Հուզական է նաեւ ԼՂՀ կառավարության դիրքորոշումը: Այս ամենն արդյոք վկայո՞ւմ է, որ Ղարաբաղի ժողովուրդը թերահավատ է իր քաղաքական այրերի հանդեպ:

– Անզսպվածությունը որեւէ դեպքում օգուտ չի բերում քաղաքական գործիչներին: Միայն ասեմ, որ ժողովրդին եւ ընդդիմախոսներին ուղղված մեղադրականները, տարբեր բաներ են: Եթե հիշում եք, Հայաստանում վերջին խորհրդարանական ընտրություններից հետո քաղաքական որոշ գործիչներ հաճախ մեղադրում էին ժողովրդին գաղափարազուրկ, ծախված լինելու մեջ: Այդպես լինում է միշտ, երբ քաղաքական գործիչը զգում է, որ ժողովուրդը երես է թեքում իրենցից: Նման դեպքերում տեղին է հարցադրումը. «Ի՞նչ ես արել դու այս ժողովրդի հետ, երբ ունեիր իշխանություն»: Ինչ վերաբերում է ԼՂՀ նախագահի եւ կառավարության նախկին բարձրաստիճան պաշտոնյաների հասցեին ուղղված փոխ-ինչ անզուսպ գնահատականներին, դրանք հասարակության մեջ տիրող մթնոլորտի արտացոլումն էին: Հասարակության, որտեղ տիրում էր վախի սինդրոմը, եւ ժողովուրդը կամենում էր համոզված լինել ռեֆորմատորների վճռականության մեջ: Որոշակի պահերի զսպվածությունը եւ նրբանկատությունը դիտվում էին որպես վճռականության բացակայություն: Նախագահի նորն արդեն իր դիվանագիտական փորձով գիտեր զսպվածության արժեքը, որովհետեւ հուզականությունը ուներ տակտիկական իմաստ, չնայած դա ԼՂՀ սահմաններից դուրս վնասեց ռեֆորմատորների վարկանիշին: Լեռնային Ղարաբաղում բոլորին ճանաչում են դեմքերով: Խորամանկելն այնտեղ հեշտ չէ: Խնդիրն առավել բարդ է թերեւս Հայաստանի մասշտաբով: ԼՂՀ հասարակությունն, իհարկե, դեռեւս վերջնականապես չի ձերբազատվել վախի սինդրոմից: Ինչը հնարավորություն է տալիս ոմանց շեղել Հայաստանի տեղեկատվական դաշտը եւ արտաքին նշաններով նմանեցնել բոլոր գործող անձանց: Դա համար խորհուրդ եմ տալիս ձեզ, լրագրողներիդ, հաճախ գնալ Լեռնային Ղարաբաղ եւ գրել անորոշ տպավորությունները: Իսկ ընկալման աղավաղվածությունը ԼՂՀ-ում կատարվող մեծ փոփոխությունների վերաբերյալ կցրվի Հայաստան բերվող առաջ եւ ճշմարիտ տեղեկատվության ճնշման տակ:

ԼԵՎՈՆ ՊԵՊԱՆՅԱՆ

Քաղաքական շանտաժի մեխանիզմը գործո՞ւմ է

«– Ղարաբաղի նախագահի հետ որեւէ տարաձայնություն չունե՞ք:

– Նման խնդիր չկա: Իսկ եթե լիներ, մեր ներին իրավիճակը կլիներ Վրաստանի կամ Ադրբեջանի պես, որտեղ մի ղեկավարը չի վստահում մյուսին: Երկխոսության այս պատասխանը Նգ նախարար Վանո Սիրադեղյանի «Ազգին» տված հարցազրույցից է («Ազգ», 12.01.1994 թ.) եւ հստակորեն «ցուցադրում» է այսօր Հայաստանում իրականացվող «բաժանիր, որ տիրես» քաղաքականության մեթոդը՝ առձակատումներ հրահրել իշխանության բեւեռի, տվյալ պարագայում՝ ՀՀ նախագահի եւ «Միասնություն» դաշինքի կողմից վերահսկվող ԱԺ, կառավարություն իշխանական «զույգի» միջեւ, ինչն, ի դեպ, չի նշանակում, թե «Միասնությունն» ինքը չի վերահսկվում երրորդ ուժերի («ազգմաղաղական» x դաշինքի) կողմից: Հայաստանի ներին իրավիճակը հավասարեցնել 90-ականների առաջին տարիներին հարեւան հանրապետություններում առկա անկախատեսելի, քաղաքական ցնցումներս իրավիճակներին պղտոր ջրերում քաղաքական ձկնորսություն ծավալելու ուրախ հեռանկարով: Սա այն գերխնդիրը, որին հետամուտ է այսօր երկրի ազգայնաշունչ ասպարեզում գործող քաղաքական «վերնախավը», ուր «ճակատագրով, թե՞ բյուրիմացաբար» հանգրվանել են գոնե վերջին տարիներին իրար հետ առնչություն չունեցող քաղաքական այրեր, հիշածին-հիշական գործիչների կողմից՝ Վազգեն Սանուկյանը, Ալոս Մանուչարյանը եւ նույնիսկ, ինչպես կարելի էր եզրակացնել արտահերթ ընտրությունների վերաբերյալ ՍԻՄ նախագահի դրսեւորած «լողզված» դիրքորոշումից, Հրանտ Խաչատրյանը:

Ընդամենը մեկ ամիս առաջ պրն Խաչատրյանը, հիշական վերընծյուղման վտանգից մտահոգ, դեմ էր արտահերթ ընտրություններին, մինչդեռ այդ ժամանակահատվածում «դիրքորոշումը հստակեցրած» Վազգեն Սանուկյանի հանրահայտ ասուլիսից հետո հայտարարեց, թե արտահերթ նախագահական ընտրությունները հասունացել են: Ինչո՞ւ այդպես միանգամից, առանց տեսանելի պատճառի փոխվեց այդ 2 քաղաքական այրերի կեցվածքը. արդյոք չի՞ գործում հոկտեմբերի 27-ի նախաձեռնությունը անվամբ քաղաքական շանտաժի միջոց դարձնելու մեխանիզմը: Ամբեկչությունից անմիջապես հետո Վազգեն Սանուկյանն անհասկանալի համոզվածությամբ հայտարարեց, թե ահաբեկիչների հնգյակը գործել է սեփական նախաձեռնությամբ: ՍԻՄ պատգամավորները նույնպես «տղաների» թիկունքում քաղաքական պատվեր չտեսան: Իսկ վերջերս, ըստ «Առավոտի», Հրանտ Խաչատրյանը «մի անձնավորության խոստովանել էր, թե հոկտեմբերի 27-ից առաջ համանման առաջարկով իրեն բազմաթիվ դիմողներ են եղել»: «Իրավունքն» իր վերջին համարում հերքել է «Առավոտի» հիշյալ տեղեկությունը՝ վերջինս հերքական սադրանք ու բամբասանք որակելով: Այնուհանդերձ, չի բացառվում, որ Նաիրի Հունանյանի՝ քաղաքական հովանավորները երկրիս թիվ 1 ահաբեկչի միջոցով նման «առաջարկներով» ի թիվս այլ ընդդիմադիր քաղաքական գործիչների, դիմել են Հրանտ Խաչատրյանին, ինչպես, հավանաբար, Վազգեն Սանուկյանին եւ այլոց ահաբեկչության օղակներից մեկի «շրջանակում» կանխորոշելով քաղաքական շանտաժի մեխանիզմը: Հիշենք նախաձեռնության սկզբնական փուլում արտահոսած առաջին «ավետիսը»՝ Նաիրի Հունանյանը ծաղրում է ինքիչներին քաղաքական գործիչների մի հսկայական «համաստեղություն» վկայակոչելով. ինքչական խմբի «արհեստավարժությունն» էլ, փառ Աստծո, բավականաչափ բարձր է՝ քաղաքական պահի թելադրանքով, ավելի ծիշտ՝ քաղաքական պահը որսած շրջանակների քաղաքական պատվերով այդ համաստեղությունից ամենահարմար անուններն, օրինակ, նախագահի աշխատակազմի նախկին ղեկավարին առանձնացնելու համար:

Այդ հարցադրումն ամենեւին անհիմն չի թվում, եթե հաշվի առնենք, որ ՍԻՄ դիրքորոշումը, որ Ֆավական հստակ արտահայտում է «Իրավունքը», էական փոփոխություն կրեց գինդապետ Գագիկ Ջհանգիրյանի վերջին ասուլիսից հետո, որի ընթացքում ինքչական խմբի ղեկավարը բազմանշանակ ասաց. «Հայկ Բաբուխանյանի վերաբերյալ նախաձեռնությունը դեռ որոշում չի կայացրել»: Եթե մինչ այդ «Իրավունքի» համակրանքն (առանձին վերապահումներով) իշխանության նախագահական թեւի կողմն էր, ապա դրանից հետո «Իրավունքն» անկիրք դիտորդի կեցվածք ընդունեց՝ արտահերթ ընտրությունների նկատմամբ «ըմբռնում» դրսեւորելով: Սրան զուգահեռ, անշուշտ, այլ փաստարկներ էլ կարող են գործել, օրինակ, հերթական անգամ քաղաքական զարգացումների հորձանուտում հայտնվելու գայթակղությունը, սակայն արձանագրենք, որ «Իրավունքի եւ միաբանության» դաշինքի «միաբանական» թեւի առաջնորդ Արտաշես Գեղամյանի դիրքորոշումը տրամագծորեն հակասում էր Հրանտ Խաչատրյանի կեցվածքին, ինչից կարելի է եզրակացնել, որ պառակտման ցեցն ԱԺ ընտրություններում հաջողության հասած այս քաղաքական միավորին էլ կարող է դիպչել...

ԼԵՎՈՆ ՊԵՊԱՆՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

ԵՍ ՔԵԶ, ԴՈՒ՝ ԻՆՁ

Ալիեւը փաստորեն պաշտպանել է Ռուսաստանի գործողությունները Հյուսիսային Կովկասում

ԲԱՔՈՒ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆՍՐՔ. Ադրբեջանի քաղաքական մեկնաբանները շարունակում են վերլուծել հունվարի 25-ին Մոսկվայում կայացած ԱՊՀ պետությունների ղեկավարների մամլո ասուլիսը, որի ընթացքում Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը հայտարարեց, որ Ադրբեջանի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման փոփոխություն, մասնավորապես, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում: Սակայն նման մեկնաբանության կողմնակիցները չեն նկատում, որ Պուտինի հայտարարությանը նախորդել էր Հեյդար Ալիեւի մի արտահայտությունը, որով նա, փաստորեն պաշտպանել է Չեչնիայի դեմ Ռուսաստանի ռազմական գործողությունը: Այսպես, անդրադառնալով Հյուսիսային Կովկասում առկա իրավիճակին, Ալիեւը նշել էր. «...Հյուսիսային Կովկասում առկա հակամարտությունը պետք է կարգավորվի, եւ դրա համար միջոցներ են ձեռնարկվում: Նա նշեցին, թե դուք էլ գիտեք, որ ողջ Կովկասում իրադրությունն աստիճանաբար կայունացնելու ուղղությամբ»:

Այսպիսով, Ալիեւը հասկանալ է տվել, որ Մոսկվայի գործողությունները Չեչնիայում գնահատում է որպես իրավիճակի կայունացմանը նպաստակուղղված քայլեր: Մինչ օրս Բաքուն հայտարարում էր ահաբեկչությունն ու անջատականությունը դատապարտելու մասին, այնուհետեւ հերքում իր մասնակցությունը դեռի Չեչնիա սպառազինությունների եւ զրահայինների փոխադրմանը: Այժմ Ադրբեջանի ղեկավարն ավելի հեռուն գնաց: Բաքուն ոչ միայն չդատապարտեց եւ չքննադատեց Չեչնիայի խաղաղ բնակչության բնաջնջման դեմ, այլեւ հասկանալ տվեց, որ այնտեղ կատարվողը համարում է «կարգավորման միջոցներ»: Դրանով իսկ պաշտպանելու Բաքվի ձգտումը, հավանաբար, թելադրված է Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակով: Քանզի պարզվեց, որ Ադրբեջանի արտաքին քաղաքականության վերաբերյալ երկրի ղեկավարության բազմաձայա «հաղթական» զեկույցները հերյուրանք են: Իսկ այժմ որոշակի «հաջողությունների» մասին խոսելու հնարավորություն է ստեղծվել:

Սակայն միամտություն կլիներ կարծել, թե Ադրբեջանի ղեկավարության բարոյական աջակցության դիմաց Ռուսաստանը կփոխի իր ռազմավարությունը Կովկասում, առավել եւս կհրաժարվի իր ռազմավարական գործընկեր Հայաստանից, գնում են Բաքվի դիտորդները: Առավել եւս, որ նույն Պուտինը բազմիցս խոսել է Կրեմլի քաղաքականության ժառանգականության մասին եւ ընդգծել, որ Ռուսաստանը կպահպանի ռազմավարական եւ գործընկերական հարաբերությունները Հայաստանի հետ: Իսկ ինչ վերաբերում է չեչենցիներին եւ Հյուսիսային Կովկասի մյուս ժողովուրդներին, ապա նրանք հազիվ թե մոռանան Բաքվի վարագիծը, նախագծուցանում են ադրբեջանական վերլուծաբանները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Բերեզովսկին փորձում է ստիպել Պուտինին բանակցելու չեչենների հետ

ՄՈՍԿՎԱ, 29 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆՍՐՔ. Բորիս Բերեզովսկին փորձում է քաղաքական ճնշում գործադրել Վլադիմիր Պուտինի վրա, որպեսզի ստիպի նրան բանակցություններ վարել չեչեն առաջնորդների հետ, հայտարարել է ՌԼԴԿ ղեկավարի տեղակալ Ալեքսեյ Միտրոֆանովը՝ մեկնաբանելով Չեչնիայում կատարվող իրադարձությունների քննության համար հատուկ խորհրդարանական հանձնախումբ ձեւավորելու մասին պատգամավորներ Կոբզոնի եւ Բերեզովսկու Պետդումայի հունվարի 28-ի նիստի ժամանակ արված առաջարկը: «Բորիս Աբրամովիչը, որպես փորձառու մարդ, սկսել է Դուման օգտագործել իր քաղաքական նպատակներին հասնելու համար», ասել է Միտրոֆանովը: Նա գտնում է, որ եթե Կոբզոնի եւ Բերեզովսկու առաջարկը պատգամավորների հավանությանը արժանանար եւ հանձնախումբ ստեղծվեր, ապա նրա հաջորդ քայլը պատգամավորական խմբի Չեչնիա այցելության կազմակերպումը կդառնար:

Միտրոֆանովի կարծիքով, այս իրադարձությունը բացասական հոգեբանական ազդեցություն կունենա ռուս զինվորների վրա, քանի որ բոլորի կողմից կընդունվեր որպես խաղաղ բանակցային գործընթացի վկայություն: Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը «ճակատագրական սխալ» թույլ կտա, եթե տվի հակառուսական ուժերի ազդեցությանը եւ համաձայնվի բանակցություններ վարել գրոհայինների հետ: Սակայն, ամենայն հավանականությամբ, մոտակա ժամանակներում Բորիս Բերեզովսկուն Պետդումայի ատյաններից կարող են հեռացնել մի քանի այլ խնդիրներ: Ինչպես Le Monde թերթին տված հարցազրույցում հայտարարել է Ռուսաստանի դատախազության ղեկավար Նիկոլայ Վոլկովը, Բերեզովսկին կարող է մեղադրվել պետբյուջեի միջոցներ եւ նավթի առեւտրի եկամուտներ յուրացնելու մեջ:

Փետրվարի սկզբին Ռուսաստանի դատախազությունը փաստաթղթեր կստանա զվեյցարական դատական իշխանություններից, որոնք թույլ կտան մեղադրել Բերեզովսկուն պետական միջոցներ յուրացնելու մեջ:

Շեւարդնաձեն ԱՊՀ-ի զարգացման հեռանկարներ է տեսնում

ԹԲԻԼԻՍԻ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՐՍԵՆՊՐԵՍ-ԳՐԱՅՍ ՆՅՈՒՍ. Մոսկվայում կայացած ԱՊՀ-ի գագաթաժողովը ցույց տվեց, որ համագործակցությունը զարգացման հեռանկարներ ունի, երկուշաբթի օրն ազգային ռադիոյին տված ավանդական հարցազրույցում հայտարարել է Վրաստանի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն: Նրա կարծիքով, Ռուսաստանի նոր ղեկավարը ՌԴ-ի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը, մոսկովյան գագաթաժողովում ցույց տվեց, որ Ռուսաստանը տրամադրված է հնարավոր ամեն ինչ անել ԱՊՀ-ի ամրապնդման համար: Միեւնույն ժամանակ ԱՊՀ-ի շրջանակներում ինտեգրացման իրական գործընթացները հնարավոր կդառնան միայն այն դեպքում, եթե ԱՊՀ-ն կայունության իսկական երաշխավոր դառնա այդ կազմակերպության մեջ մտնող երկրների համար, ասել է նախագահ Շեւարդնաձեն: Գնահատելով Վլադիմիր Պուտինի հետ հունվարի 25-ին Մոսկվայում կայացած իր հանդիպումը, Էդուարդ Շեւարդնաձեն նշել է, որ Ռուսաստանի նոր ղեկավարը «լավ է հասկանում Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ հարաբերությունների հետագա բարելավման անհրաժեշտությունը»:

Ի դեպ, Շեւարդնաձեն հայտարարել է նաեւ, թե Վրաստանի նախագահական մրցարշավում ամենաուրախ հավակնորդ համարում է իրեն:

Վրաստանի նախագահի ընտրությունները կայանալու են ապրիլի 9-ին: Ներկա պահին կենտրոնական ընտրական հանձնաժողովում հայտեր են ստացվել պետության բարձրագույն պաշտոնի վեց հայցորդից: Ընդդիմությունն առայժմ պաշտոնապես չի առաջադրել իր թեկնածուին:

Արհեստական տեսողություն կույրերին

2000 թ. առաջին օրերին գիտնականները հաճելի անակնկալ են մատուցել կույրերին: Կենսաբժշկական սարքավորումներ պատրաստող ամերիկացի մասնագետների մի խումբ հունվարի 18-ին հայտարարել է մի նորարարության մասին, որը արհեստական տեսողության հնարավորություն է ընձեռում կույրերին: Ավելի քան 30 տարվա փորձառական հետազոտություններից հետո Նյու Յորքի Դոբել ինստիտուտին եւ նրա Լոնգ Այլենդում ու Շվեյցարիայում գտնվող մասնաճյուղերին հաջողվել է մոտ 20-400 սրությամբ վերականգնել կույր մարդկանց տեսողությունը:

Համաձայն ներքին օրգանների արհեստական պատվաստման ամերիկյան ընկերության հրատարակած «ASAIO Journal» ամսագրի տվյալների, «Դոբելյան այլը» բաղկացած է հեռուստատեսային փոքրածավալ աղբարկղից եւ հեռավորության գերծայնային սենսորից, որոնք ամրացվում են ականջին: Սենսորները լարերով միացված են փոքրիկ համակարգչին, որը կարելի է «թաքցնել» հագնախորդի գոտում: Տեսողության եւ հեռավորության ազդանշանները «մշակելուց» հետո, համակարգիչն օգտագործելով գերարդիական պատկերային տեխնոլոգիա եւ ալգորիթմեր, պարզեցնում է պատկերը՝ վերացնելով բոլոր տեսակի կողմնակի «աղմուկը»: Համակարգիչն այնուհետեւ գործի է դնում մեկ ուրիշ միկրոհամակարգիչ, որն ազդանշաններն ուղարկում է 68 պլատինե էլեկտրոդների, որոնք տեղադրված են գլխուղեղի տեսողական կեղեւի մակերեսին: Առանց հաճախորդին անհանգստություն կամ վարակ պատճառելու, մաշկի միջով լարերի անցկացումը անցած քսան տարվա ընթացքում այն կարեւոր նվաճումներից մեկն է, որով ներկայի սարքավորումը հնարավոր է եղել ստեղծել:



«ASAIO Journal» ամսագրում նկարագրված հիվանդը 62 տարեկան տղամարդ է, որը 36 տարեկանում ամբողջովին կուրացել է վնասվածք ստանալու հետեւանքով: Նոր սարքավորումն օգտագործելուց հետո նա այժմ ի վիճակի է մեկուկես մետր հեռավորության վրա կարդալ 5 սմ մեծության տառեր, ինչը նշանակում է, որ տեսողությունը մոտ 20-400 սրությամբ վերականգնվել է: Չնայած էլեկտրոդի ընձեռած համեմատաբար փոքր չափին, հիվանդը կարողանում է կողմնորոշվել անծանոթ շրջապատում, օրինակ, Նյու Յորքի մետրոյի համակարգում: Մեկ ուրիշ փոխկապակցող էլեկտրոնային սարքի միջոցով նա նույնիսկ կարողանում է օգտվել նաեւ Ինտերնետից: «Կույրին «տեսնելու» հնարավորություն տվող արհեստական աչքի հայտնագործումն իրականություն է դարձնում դեռ 1751 թ. էլեկտրականության հայտնագործման լուրը հաղորդելիս Բենջամին Ֆրանկլինի կատարած կանխատեսումը», նշել է Դոբել ինստիտուտի հիմնադիր դոկտ. Ուիլյամ Դոբելը, ավելացնելով, որ ավելի քան 300 գիտնականներ, ինժեներներ եւ բժիշկներ են ընդգրկված եղել ծրագրի տարբեր կողմերի իրականացման մեջ:

Ուսումնասիրությունների առաջին փուլում օգտագործված համակարգիչը եղել է խոշոր գրադարանի չափ եւ կշռել է մի քանի հազար ֆունտ: Անցած 21 տարվա ընթացքում համակարգիչների 6 «սերունդ» է փոխարինել մեկը մյուսին, եւ այժմ արտաքին «էլեկտրոնային փաթեթն» ընդամենը մի բարարանի չափ է դարձել, որը կշռում է մոտ 10 ֆունտ (5 կգ) մարտկոցներով միասին:

Դոկտ. Դոբելն իր առաջին փորձարկումները մարդկանց վրա կատարել է 1970 թ., երբ 3 կույրեր կամավոր համաձայնել են, որ ժամանակավորապես էլեկտրոդներ տեղադրվեն իրենց գլխուղեղի տեսողական կեղեւի մակերեսին: Հետագայում չորս այլ կույրեր ընդգրկվել են փորձարկումներում: Նրանցից երկուսի մարմնում տեղադրվել են ներմաշկային մշտական էլեկտրոդներ 1978-ին Նյու Յորքի Կոլումբիա Պրեսբիթերյան բժշկական կենտրոնում:

Ըստ դոկտ. Դոբելի, ակնկալվում է, որ արհեստական տեսողության նոր սարքավորումը սահմանափակ քանակով առայժմ օգտագործվում կհայտնվի այս տարվա վերջերին:

Դոբելի ինստիտուտը եւ նրա Լոնգ Այլենդի ու Շվեյցարիայի մասնաճյուղերը դասվում են բժշկական սարքավորումների պատրաստման եւ տեղադրման, ինչպես նաեւ ուսումնասիրությունների անցկացման աշխարհում ամենազարգացած հաստատությունների շարքում: Վերջին երեսուն տարվա ընթացքում ավելի քան 40 երկրներից մոտ 15 հազար հիվանդներ են օգտվել նրանց ծառայություններից:

Հ. Ե.

Սունկն ընդդեմ մարիխուանայի

Ֆլորիդայի նահանգի (ԱՄՆ) իշխանությունները մտադիր են ոչնչացնել մարիխուանայի անօրինական ցանքատարածությունները՝ այդ նպատակով կիրառելով ծագումնաբանորեն փոխակերպված մի նոր սնկատեսակ: Մոնտանայի նահանգի կենսատեխնոլոգիական ֆիրմաներից մեկի հետազոտված Fusarium oxysporum սունկը «կրծում է» միմիայն մարիխուանայի ցողունները:

Ուժեղ թմրադեղի հումք հանդիսացող այդ բույսի դեմ կենսաբանական պայքարի նախաձեռնողը Ֆլորիդայի հակաթմրադեղային վարչության տնօրեն Ջիմ Մակդոնոն է, որի կողմից [illegible] մարիխուանայի 55317 ցողուն [illegible] վել: ԱՄՆ-ում բնաջնջողներ [illegible] տագովները եւ գիտնականներ [illegible] ը դեմ են այդ գործողությանը: Նրանք որպես փաստարկ նշում են «ֆուզարիում» սնկերի փոխակերպվելու եւ արագորեն տարածվելու հատկությունը: Բնաջնջողները երկյուղում են, որ այդ սնկերը մարիխուանայից հետո կարող են «հարձակվել» բքենու եւ թզենու, ինչպես նաեւ լոլիկի, պղպեղի, եգիպտացորենի ցողունների եւ խաղողի վազերի վրա:

Ի դեպ, պերուացի հողագործներն արդեն բողոքել են, թե ամերիկացիները Պերուի տարածքում գտնվող կոկայի դաշտերում տարածել են ծագումնաբանորեն փոխակերպված ինչ-որ սնկատեսակ, որը «գրոհել է» բանանի տնկարկների վրա: «Էքսպրես» հանդեսի տեղեկատվության համաձայն Վաշինգտոնը մերժել է այդ մեղադրանքները, միաժամանակ խոստովանելով, որ 14 միլիոն դոլար է հատկացրել նավթ բույսերի դեմ ուղղված կենսաբանական միջոցների [illegible]

ԱԶԳ

Մշակույթ

Ս. Փարաջանովի Մինսկի ելույթից

Կինոարվեստի կատարյալ անկում... Ճարմանայի լճացում է, վառ արվեստագետներ չկան: Երիցս տառապյալ Տարկովսկին չի կարող ամեն տարի մեզ ցնցել իր տաղանդով, իր խորությամբ, իսկ մնացյալն ինձ թվում է դատարկ: Եվ թող ների մեզ մեր դեկավարությունը, ես այստեղ եկա գնացքով... Եվ Կենտրոնական կոմիտեի անդամը, ինչպես ինքն իրեն ներկայացրեց, ասաց երկար բացատրում էր ինձ, թե ինչու է այդպես: Ես գտնում եմ, թե պատճառն այն է, որ արվեստագետներին, ամենահետաքրքիր արվեստագետներին չեն վստահում: Անվստահությունը աննկարագրելի փիրավորանք է: դրանից մի ամբողջ ճակատագիր է կախված եւ արվեստագետի չափազանց կարճ կյանքը: (...)

Ես գտնում եմ, որ եթե կա մի արվեստագետ, որը կարող է գեղեցիկը, զարմանահրաշը ստեղծել, ապա նրան պետք է անհապաղ շահագործել, պետք է Կենտրոնական Կոմիտեի հրաման լինի, հասկանո՞ւմ եք, նրան պետք է ասիրել, որ ֆիլմեր անի: (...)

Ի՞նչ է ինձ համար այսօր գրականությունը: Մի՞թե կարծում եք, թե կոճակներ եմ սեղմելու, եւ Դեւը կթռչի... Չէ՞ որ ծիծաղելի է այսօր այդպես ներկայացնել ռուս դասականներին, ինչպես դա անում են ռուս ռեժիսորները: Չէ՞ որ դա ծիծաղելի է, մեր օրերո՞ւմ... Դա կիսասի պաթոլոգիայի, հասկանո՞ւմ եք: Ուշադրություն դարձրեք, ամբողջ ռուս գրականությունը էկրանավորեցին, ի՞նչ մնաց, որեւէ արժեքավոր գործի՞ անուն տվեք, որը դեռ չի նկարվել: Բոլորն էլ տապալվել են: (...)

Չէ, ինչպես երեւում է մեր արվեստագետներն իրենց մեջ պոետական խայթը չեն կրում, իրենց աչքարիը չեն կրում: Նրանք դատարկ են, շինծու եւ կուրս: Հատկապես Մոսկվայի արվեստագետները: Նրանք կուրս են, հասկանո՞ւմ եք, այդ պատճառով էլ շարունակ տապալվում են... Դա շատ բարդ խնդիր է: Անձամբ ես կանխազգում եմ խորհրդային կինոյի աղետեցնող անկումը: (...)

Ես երբեմն ասում եմ, թե ֆիլմեր եմ անում ընկերներիս համար, նրանք ոչ մի բացատրություն չեն պահանջում... Նրանք հասկանում են, որ Հայաստանի, Վրաստանի, բյուրգանդական տաճարներում հատուկ կնիքներ են եղել արձագանքողներ, որոնք պատի անկյուններում էին տեղադրված: Հասկանո՞ւմ եք, եթե մշակույթի նախադարը դա չի հասկանում... Կամ երբ ես նկարում էի «Կիեւյան ոմնանկարները», այնտեղ մերկ բնորդուհի կար նկարչի արվեստանոցում, նա ինձ ասում էր. «Ինչպե՞ս կարող էիր, դուք այդպիսի նրբին արվեստագետ, վերցնել այդպիսի այլանդակ կնոջ, կախված հետույքով, իսկա կրծքերով»: Ես պատասխանում եմ. «Լսեք, չէ՞ որ դա Մայոլ է»: «Ինձ չի հետաքրքրում նրա ազգանունը», ասաց մինիստրը: Հասկանո՞ւմ եք, նա նույնիսկ չգիտի, որ հանդակի որոշակի ձեւեր կան, որոշակի ոլորտիկա: Ինձ թվաց, թե մենք խոսում ենք տարբեր լեզուներով: (...)

Կոգինցեւն ինձ խնդրեց «Լիր արքա» չնայել: Նամակ կա, որտեղ նա բառացիորեն գրում է, թե «Սայաթ-Նովայից» հետո ամոթի զգացում ունի, եւ նա ափսոսում է, որ ինձ չի հրավիրել ֆիլմի գլխավոր դերերը անելու: Ոչ թե որ ես այնտեղ վերածննդյան գլխավոր դերեր կստեղծեի, այլ... այնտեղ առնվազն պետք էր բոլորովին ուրիշ լուծում գտնել: Իսկ ի՞նչ արեց նա «Լիր արքայում»: Նա պարզապես ընթերցեց ստեղծագործությունը առանց սեփական մեկնաբանության: (...) Հասկանո՞ւմ եք, թե որն է Կոգինցեւի սխալը: Նա չի հասկանում, որ շեքսպիրյան երեւակայությունը եւ շեքսպիրյան ստեղծագործությունները շեքսպիրյան ժամանակի ֆոնիկոնը չեն, այլ մեծ բանաստեղծի եւ թատերագրի, մեծ արվեստագետի երեւակայություն: Դա ընդհանրապես պրոցես է, փիլիսոփայական պրոցես: Ամենասարսափելին այն է, որ նա նկարում է շեքսպիրյան ժամանակների տարեգրությունը: Ա՜յ եթե կարողանար վերածննդի սինթետիկ կերպարն ստեղծել... Ես նրան առաջարկեցի. տվեք ինձ ձեր բոլոր ֆիլմերը, ուրեմն «Լիր արքան» եւ «Համլետը», եւ ձեզ համար մի երրորդ ֆիլմ կանեմ ձեր իսկ նյութերից: Եվ ցույց կտամ ձեզ, թե ինչ բան է Շեքսպիրը: Ձուլ զգայական: Ինչպես վարժություն, ինչպես երաժշտություն: Չէ՞ որ հնարավոր է

Անիմանալին, անկանխատեսելին

Մեր թերթի հունվարի 13-ի համարում տպագրվել էին Անահիտ Թոփչյանի մտորումները Սերգեյ Փարաջանովի մասին: Այս անգամ ընթերցողին ենք ներկայացնում Փարաջանովի հետ կապված փիլ հայտնի փաստաթղթեր:

այդպիսի մի կոլաժ անել որոշ ֆիլմերից, կրթեր ցուցադրել, որովհետեւ այնտեղ, հասկանո՞ւմ եք, չկան կրթեր: Կրթեր չկան, կան պիժոններ, հասկանո՞ւմ եք... Գուցե ես իզուր եմ զայրանում, բայց ուրիշ համոզում չունեմ: (...)

Ես հասկանում եմ, որ շատ համարձակ եմ խոսում: Բայց երեկ ինձ զայրացրեց այդ Կենտկոմի անդամը, որը սպառնում էր, թե դեռ մի վեց տարի էլ չեմ աշխատի: Դեհ, ես չեմ աշխատի, կգտնվի մեկ ուրիշ տաղանդավոր մարդ, նա, միեւնույն է, որեւէ տեղ բնականաբար կհայտնվի: Պարզապես վիրավորական է երբ ես ֆիլմեր անել չգիտեի, ինձ տալիս էին, իսկ հիմա, երբ գիտեմ, չեն տալիս... Ես գտնում եմ, որ դա ցավ է, մեծ վիրավորանք, ես գտնում եմ, որ եթե 40 տարեկանում քեզ չեն վստահում որպես արվեստագետի, ապա այն աշխարհում էլ չեն վստահի:

- Ի՞նչ լուսանկար է սա:

- Շատ հազվագյուտ լուսանկար է: Սերգեյի առաջին կինն է: Երբեմ ոչ ոքի նրա մասին չի պատմել: Շատ ծանր էր տանում նրա մահը: Դա մի գեղեցկուհի էր, ազգությամբ թաթար, աշխատում էր Մոսկվայի Կենտրոնական հանրախանութում: Սերգեյը գնում էր, հեռվից նայում հիանում... Համոզեց աղջկան ամուսնանալ իր հետ: Սակայն Նիգյարի (այդպես էր աղջկա անունը) ծնողներն արգելեցին, քանի որ նա արդեն նշանված էր թաթարի հետ: Այդ ժամանակ նրանք գաղտնի ամուսնացան: Ապրում էին ՎԳԻԿ-ի (Համամիութենական կինոինստիտուտ Մոսկվայում) հանրակացարանում: Աղջկա հարազատները հետապնդեցին նրան եւ գցեցին գնացքի տակ, նրանք նույնիսկ աղջկա գերեզմանն ավերեցին:

Սերգեյն ու Նիգյարն այն ժամանակ 22 տարեկան էին: Փարաջանովն այնքան էր ցնցված, որ տասը տարի չէր կարողանում ուշքի գալ: Այս ամենը հետո արտացոլվեց նրա «Աշիկ Քերիբ» ֆիլմում: Սերգեյն ընդհանրապես շատ տպավորվող էր... Երկրաչարժից հետո, երբ նրան Սոչիսակ են տարել, նա շատ ծանր է ապրել. «Ինչո՞ւ այստեղ բերեցիք: Բավական էր մի քանդված շենքի լուսանկար ցույց տայիք»: Հիշում եմ, մի անգամ ասաց. «Մի՞թե ողբերգություն ցույց տալու համար պետք է արյան գետեր հոսեցնել: Բավական է մի կաթիլ արյուն ցույց տալ»:

- Քչերը գիտեն, թե որքան ծանր էր նրա կյանքը Կիեւում: Առանց աշխատանքի, առանց դրամի... Սվետլանային նա սիրահարվեց, երբ 32 տարեկան էր, իսկ աղջիկը 17: Նրանք զավակ ունեցան, անունը Սուրեն:

Այսօր Կիեւում Փարաջանովի արձանն է դրված:

Փարաջանովի վերջին տարիների հարցազրույցներից

Ես ծանր օրեր եմ ապրել: Ընդհանուր հաշվով ինձ դատապարտել են 15 տարվա բանտարկության: Անգամ թուրք բանաստեղծ Նազըմ Հիքմեթն այդքան երկար չի մնացել բանտում: Նրանք գողացել են իմ ստեղծագործական կյանքի 15 տարին: Ինձ ներկայացված մեղադրանքները տարօրինակ էին եւ սուտ: Եկել է ժամանակը, երբ կարելի է ճշմարտությունը վերականգնել, ամեն ինչ իր տեղը դնել, սակայն կորցրած ժամանակն անհնար է վերադարձնել: Ես այսօր էլ ուժ ու եռանդ ունեմ ֆիլմեր անելու:

Ես 63 տարեկան եմ եւ միշ եմ նկարել: Իմ պահարաններում 23 չիրագործված սցենար կա: Դժվար է ինձ համար: Բայց դա ոչինչ: Մենք կտանենք մեզ հետ մեր մահվան մեջ մեզանից մի մասնիկ, եւ դա կվերածվի գաղտնիքի (...):

Ես հարցնում եմ, ո՞վ է պատասխանատու այդ 15 տարիների համար... Ես միակ խորհրդային ռեժիսորն եմ, որին երեք անգամ բանտ են դրել երեք տարբեր ղեկավարների ժամանակ: Ստալինի, Բրեժնեւի եւ Անդրոպովի, եւ գուցե մի գեղեցիկ օր նորից կնստեցնեն եւ դարձյալ չգիտեմ ինչու: Ումի՞ց ներողություն պահանջեմ: Ո՞վ կարող է հատուցել այդ կորած տարիները եւ վերականգնել իմ իրավունքները:

Ես մնում եմ բացված հովանոցի տակ, որովհետեւ իմ առաստաղը ծակ է եւ ջուր է հոսում: Ես արքնանում եմ թրջված... Ինչպես Տարկովսկու ֆիլմերից մեկում, ես պրում եմ տիղմի, ճահճի մեջ... Եվ դա առաջացնում է իմ գործընկերներից մի քանիսի նախանձը:

Բայց համենայն դեպս ազատության մեջ եմ...

Ես պրում եմ իներցիայով: Իմ կոմունիստական կուսակցությունը զարգացող ամերբայի վիճակում է: Ոմանք ինձ բանտ են նետում, ոմանք էլ փառաբանում: Ի՞նչ եմ դարձել այսօր: Ես վերակառուցման փորձարարական խորհրդանիշն եմ: Ինձ սան են տալիս ամենուր որպես թութակ, նշանավոր ծաղրածու Օլեգ Պոպովի նման: Ես հարգված եմ պալատում: Կրծքիս խաչեր կան... Կարծում են, թե ոսկի է, բայց ես դուրս եմ եկել բանտից առանց կոպեկի: Ես քանդված եմ, եւ առաջին հերթին որպես ստեղծագործող: Ես թալանված եմ, եւ առաջին հերթին իմ ստեղծագործության մեջ:

Սերգեյ Փարաջանովն զբաղվում էր դիմակներ պոկելով: Հանդուգն, դիտուկ եւ խայթող: Նրա հայացքից ոչինչ հնարավոր չէր թաքցնել: Նա ամեն ինչ տեսնում էր մինչեւ հատակը եւ ասում մտածածը: Միայն արքայական ծաղրածուներին է դա ներվում, այն էլ ոչ միշտ: Բայց Փարաջանովը ոչ մեկի ծաղրածուն չէր: Եվ նրան չներեցին: Դրանում էր նրա ողբերգությունը: Ազատ, հանճարեղ, ստեղծագործող մարդու ողբերգությունը: Իսկ հիմա արձանե՞ր են կանգնեցնում: Ինչի՞ համար: Որպես արդարացումն իրենց չարագործությունների՞: Ավելի լավ չէ՞ր կենդանության օրոք...

ԱՆԱՀԻՏ ԹՈՓՉՅԱՆ,
Երեւան-Փարիզ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՄԱՐԴՈՒ ՀԵՏ

Մեկ մատով կատարվող դաշնամուրային պիես

Խոսք ու զրույց բանաստեղծ Վահրամ Մարտիրոսյանի հետ

Վահրամ Մարտիրոսյանը տարօրինակ կեցվածք ունի, տարօրինակ կենսագրություն (ապրում է Երեւանում, բեւեռյումրեցի է), շաբաթը մի քանի անգամ «ԱՐ» հեռուստաընկերության եթերից խաղախականությունից ու խաղախական գործիչներից է խոսում, ոչ մի բան չի ասում բանաստեղծությունից եւ բանաստեղծների մասին...

- Ասել եմ, դու չես դիտել իմ այդ հաղորդումները:

... Տարօրինակ է, որովհետեւ... բանաստեղծ է: Ու եթե իրեն հարցնես ի՞նչ է կյանքը, բանաստեղծորեն մանրամասն կբացատրի.

- Կյանքը նման է ծանր վարագույրի ետեւից երեւացող ծառի տերեւաթափ ծյուղերի, կյանքը նման է դասարանում ընկերոջ ականջին մի բան շշնջացող աշակերտի, կյանքը նման է օգտագործված իրերի խանութից գնված հագուստի, կյանքը նման է անքամի եղանակի դրոշի, կյանքը նման է անընդհատ իր մասին տարմիս մարդու համբավ ստեղծել ջանացող տափակ մեկի, կյանքը նման է փողոցով անցնող՝ սիրուն աղջկա ետեւից ընկերախմբի աջակից ձեռքերով հրված պատանու...

- Ուրի՞շ...

- Կյանքը նման է շուտ մթնող օրվա, կյանքը նման է հանկարծակի լուսացող գիշերվան, լուսումութի, կյանքը նման է մեկ մատով կատարվող դաշնամուրային պիես, կյանքը նման է խոհանոցում վրան յուղաբծեր ցայտած ձեռագիր մատյանի, կյանքը նման է այնպիսի մի անցանկալի անձնավորության, որին մինչեւ չես հանդիպում, չես խորշում, կյանքը նման է վաղուց չտեսած ծանոթի ձեռքսեղմման կամ անձանոթ աղջկա օդային համբույրի...

- Է՞, որ կյանքի մասին այսքան (ու դեռ շատ ավելի) բան գիտես, չիմացողիս ասա, թե ի՞նչ է մահը:

- Մահը նման է ցլամարտիկի, մահը նման է ամալկոս ժոքիսի, մահը նման է իսպաներեն մանյանա եւ անգլերեն օլ ռայթ արտահայտություններին, մահը նման է հանրահայտ հանելուկի- ոչ- մահը նման չէ հանրահայտ հանելուկի, մահը նման է Փարիզի, մահը նման է ծառի տերեւաթափ ծյուղերի (ծանր վարագույրի ետեւից երեւացող), մահը նման է դասարանում ընկերոջ ականջին ինչ-որ բան շշնջացող աշակերտի, մահը նման է մտագարության...

- Է՞, որ էսքան գիտես, Վահրամ, ասա. ի՞նչ անենք, որ չմտագարվենք:

- Խուսափ տարածությունների միջեւ երթեւեկել սեղմված ստով, հիշել անցյալի լավագույն մասը միայն, հիշել անցյալի վատագույն մասը, մոռանալ անպայման, որ երկուսը միասին են կատարվել...

- Ու այս ամենն իմանալու համար պարտ է սեղաններին հակված կարդալ քո գիրքը՝ «Սեղաններին հակված»:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Լոս Անջելեսում մեծարեցին Հովհաննես Բաղալյանին

ԵՐԵՎԱՆ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Սփյուռքահայ հայտնի երգիչ Լեւոն Գաբրիյանը Լոս Անջելեսից հեռախոսով տեղեկացրեց, որ քաղաքի «Յունայտեդ կոմունիկեյշն» եկեղեցու հանդիսասրահում, 1400 ունկնդիրների ներկայությամբ նշվել է Հայաստանի ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղալյանի բեմական գործունեության 60-ամյակը: Իրանահայերի միության արվեստից մասնաճյուղի նախաձեռնած երեկոն վարել է Նունե Ավետիսյանը, որի ընթացքում, ի պատիվ պատվավոր հյուրի, մի քանի երգեր է կատարել թեհրանահայ երգիչ Վիգենը:

Վերջում շնորհակալության խոսք է ասել Հովհաննես Բաղալյանը: Երեւանից Լոս Անջելես տեղափոխված Արամ Մերանգուլյանի անվան ժողգործիքների անսամբլի անդամներից կազմված նվագախմբի հետ կատարել է մի քանի ազգային եւ հայրենասիրական երգեր:

-Ես եւ մեր խմբի բոլոր անդամները ուրախությամբ ընդունեցինք մեր այս նոր հանդիպումը սիրված վարպետի հետ,-ասաց նվագախմբի ղեկավար Արարատ Պետրոսյանը: Ինչպես միշտ, Հովհաննես Բաղալյանը մեզ համար մնում է երիտասարդ, ձայնն անսպառ վարպետը:

Տեղի հայերի խնդրանքով համերգը կրկնվելու է փետրվարի 6-ին, իսկ 11-ին Հովհաննես Բաղալյանի պատվին համերգ են տալու իր նախկին սաները: Այդ համերգում Լեւոն Գաբրիյանը երգելու է Բաղալյանից սովորած երգերը, ինչպես նաեւ՝ իր ստեղծագործություններից: Երգիչն այնուհետեւ շրջագայելու է ԱՄՆ-ի այլ հայաբաշխ քաղաքներում:

ՕՐՎԱԾՈՒՅՑ

Փետրվարի 1

- Լրանում է հայ հասարակական ու մշակութային գործիչ Հովհաննես Լազարյանի ծննդյան 210-ամյակը: 1815-ից սկսած մինչեւ մահը նա Մոսկվայի Լազարյան ճեմարանի խնամակալն էր, որի հաշվին բազմիցս մեծ գումարներ է փոխանցել: Նրա աջակցությամբ 1851-ից ճեմարանին կից բացվել է նախապատրաստական բաժին՝ հայազգի ուսանողների համար: Նրա նյութական օժանդակությամբ հնարավոր դարձավ ռուս-հայերեն առաջին բառարանի հրատարակումը:
- 1901 թ. ծնվել է ամերիկացի դերասան Քլարկ Գեյբլը:
- Փետրվարի 1-ին լրանում է ռուս գեներալ, ֆելդմարշալ Իվան Պասկեւիչի մահվան 140-ամյակը:
- 1922 թ. ծնվել է իտալացի երգչուհի Ռենատա Տիբալդին:
- 1939 թ. ծնվել է ռուսական բալետի պարուհի Եկատերինա Մաքսիմովան:
- Փետրվարի 1-ին մահացել է գերմանացի գեներալ, ֆելդմարշալ Էրիխ Պաուլյուսը:
- 1873 թ. ծնվել է ռուս երգիչ (բաս) Ֆեոդոր Շալյապինը:
- Այս օրը հին հայկական տոմարով Արաց ամսվա Արեգ օրն է:
- 1. Տոն Սբ. Աթանասիոս եպիսկոպոսի, նրա 10 աշակերտների

ՆԱՐԻԿ ԹԱՊԵՏՅԱՆ

ԱԶԳ

Մարզական

ՇԱԽՄԱՏ

Կասպարովը հավատարիմ է իրեն

Նոր, չափազանց տպավորիչ հաղթանակ տարավ Գարրի Կասպարովը: Հոլանդական Վեյկ ան Զեե քաղաքում անցկացված ավանդական մրցաշարում նա հիանալի հանդես եկավ ու մեծ առավելությամբ գրավեց առաջին տեղը:

Շախմատասերներին հիշեցնենք, որ մրցաշարը շաս ուժեղ կազմ էր հավաքել: Այստեղ խաղում էին 14 գրոսմայստերներ, որոնցից 6-ը տեղեր են գրավում համաշխարհային դասակարգման ցուցակի առաջին տասնյակում: Մասնակիցների միջին վարկանիշը 2697 է, ինչը համապատասխանում է ՖԻԴԵ-ի սանդղակի 18-րդ կարգին:

Կասպարովը Վեյկ ան Զեեում հանդես եկավ համարյա ութ ամսվա ընդմիջումից հետո: Մրցաշարի մեկնարկում տեւական դադարն իրեն զգացնել էր տալիս, բայց Կասպարովը մնում է Կասպարով: Նա հենց սկզբից աղյուսակը գլխավորողների թվում էր, իսկ 9-րդ տուրից սկսած միանձնյա առաջատար դարձավ ու գլխավոր մրցանակի ոչ մի հույս չթողեց մյուս շախմատիստներին: Աշխարհի 13-րդ չեմպիոնը տարավ 6 հաղթանակ, 7 հանդիպում ավարտեց ոչ-ոքի արդյունքով եւ 1,5 միավորով առաջ անցավ հետաքրքրող եռյակից: Դժվար է հիշել այսքիսի տպավորիչ առավելություն նման կարգի մրցաշարերում:

Վաս չէր նաեւ մեր Սմբատ Լպուտյանի մրցելույթը: Անցյալ տարի հաղթելով Վեյկ ան Զեեի երկրորդ մրցաշարում՝ Հայաստանի եռակի չեմպիոնն իրավունք էր նվաճել մրցելու սուպեր-մրցաշարում: Լպուտյանն առաջին անգամ էր հանդես գալիս ընտրյալների խմբում, եւ անսովորությունն էր պատճառը, որ մեկնարկը շաս անհաջող սացվեց: Բոլոր մասնագետները նշում են, որ ստեղծագործական առումով Լպուտյանը բարձրակարգ խաղ էր ցուցադրում, բայց վրիպումներն իրենցն արեցին: Առաջին հինգ հանդիպումներից հետո Սմբատն ընդամենը կես միավոր ուներ, բայց կարողացավ հավաքել իրեն եւ զգալիորեն շտկել իրավիճակը: Հաջորդ հինգ տուրերում նա իրար ետեւից երկու հաղթանակ տարավ (Պոլգարի եւ Կորչնոյի նկատմամբ), երեք պարտիայում ոչ-ոքի խաղաց: Եզրափակիչ երեք հանդիպումները այնքան էլ հաջող չստացվեցին (ընդամենը կես միավոր), բայց Լպուտյանի վերջնական արդյունքը՝ 4,5 միավոր, պետք է գոհացնի շախմատասերներին (հիշեցնենք, որ մեր գրոսմայստերի անհատական վարկանիշը մրցաշարում ամենացածրն է):



Վերջում՝ ներկայացնենք մրցումների ամփոփիչ արդյունքները. (միավորների հավասարության դեպքում տեղերը բաշխվել են ըստ մրցաշարային գործակիցների). 1. Գարրի Կասպարով (Ռուսաստան)՝ 13 հնարավորից 9,5 միավոր, 2. Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան), 3. Պետեր Լեկո (Հունգարիա), 4. Վիշվանաթան Անանդ (Հնդկաստան)՝ 8-ական, 5. Ալեքսանդր Մորոզեւիչ (Ռուսաստան)՝ 7,5, 6. Մայքլ Ադամս (Անգլիա)՝ 7, 7. Երուն Պիկեն (Հոլանդիա)՝ 8. Յան Թիման (Հոլանդիա)՝ 6,5-ական, 9. Պրեդրագ Նիկոլիչ (Բոսնիա եւ Հերցեգովինա)՝ 6, 10. Նայջել Շորտ (Անգլիա)՝ 5,5, 11. Հուդիթ Պոլգար (Հունգարիա)՝ 5, 12. Վիկտոր Կորչնոյ (Շվեյցարիա)՝ 5, 13. Սմբատ Լպուտյան (Հայաստան)՝ 4,5, 14. Լուկ վան Վելի (Հոլանդիա)՝ 4 միավոր:

ԿԱՍՊԱՐՈՎ-ՎԱՆ ՎԵԼԻ

1.e4 c5 2.♘f3 d6 3.d4 cd4 4.♘d4 ♘f6 5.♘c3 a6 6.♗e3 e6 7.f3 b5 8.g4 h6 9.♕d2 ♘bd7 10.0-0-0 ♗b7 11.h4 b4 12.♘a4 d5 13.♗h3 g5 14.♗g2 gh4 15.♖h4 de4 16.g5 ♘d5 17.♖e4 hg5 18.♗g5 ♕a5 19.f4 ♖h2



20.♘e6 fe6 21.♖e6 ♔f7 22.♕d3 ♗g7 23.♕f5 ♔g8 24.♖d5 ♕a4 25.♖e7 1-0

ԿՈՐՉՆՈՅ-ԼՊՈՒՏՅԱՆ



28...c3 29.♕f2 ♘e7 30. ♘e6 fe6 31. g4 ♖bc7 32.bc3 ♖c3 33. ♗d7 ♖f3 34.♕f3 ♖c3 35.♕e2 ♘c6 36.♗c6 ♖c6 37.♕b5 ♖c4 38.♕d7 ♖d4 39.♕e6 ♖f4 40.♖c1 ♔g7 41.g5 ♕f7 42.♕c8 ♕a7 43.♔h1 ♕f2 44.♕d7 ♖f7 45.♕d5 ♕e2 46.h4 ♕g4 47.e6 ♕h3 0-1

Արաշես Մինասյանի խոշոր հաջողությունը

Երեւանցի գրոսմայստեր Արաշես Մինասյանը հիանալի հանդես եկավ Իսպանիայի Ուբեդա քաղաքում անցկացված խոշոր մրցաշարում: Հիշեցնենք, որ շվեյցարական խաղակարգով, 10 տուրով անցկացված մրցաշարում հանդես էին գալիս մի քանի տասնյակ երկրների 106 շախմատիստներ, որոնցից 18-ը միջազգային գրոսմայստերներ էին:

Մինասյանը հաստատեց ուժեղ խաղաց մրցաշարի առաջին կեսում. նա հենց սկզբից գլխավորեց աղյուսակը: Արաշեսը 6 հնարավորից 5,5 միավոր էր վաստակել, իսկ մինչեւ վերջին տուրը զգալիորեն առաջ էր անցել մոտակա հետաքրքրողներից: Վերջին տուրում Մինասյանը պարտություն կրեց Ռուսաստանի ներկայացուցիչ, գրոսմայստեր Պավել Տրեգուբովից, բայց նույնիսկ դա մեր շախմատիստին չխանգարեց նվաճել Ուբեդայի մրցաշարի գլխավոր մրցանակը:

Մինասյանն ու Տրեգուբովը 10 հնարավորից վաստակեցին 7,5-ական միավոր, բայց մրցաշարի հաղթող ճանաչվեց երեւանցի շախմատիստը, քանի որ նրա գործակիցներն ավելի բարձր էին: Միանգամից 11 մասնակիցներ վաստակեցին 7-ական միավոր եւ բաժանեցին 3-13-րդ տեղերը:

Ընթերցողները գիտեն, որ Ուբեդայի մրցաշարին Արաշես Մինասյանից բացի, մասնակցում էին Հայաստանի եւս յոթ ներկայացուցիչներ: Ներկայացնենք նաեւ նրանց ցույց տված արդյունքները. Ատոմ Անասասյան՝ 6,5 միավոր (14-17-րդ տեղեր), Գաբրիել Մարգսյան, Արա Մինասյան, Լեւոն Արոնյան՝ 6-ական (18-29-րդ), Նորայր Քալանթարյան, Դավիթ Կարաթորոսյան՝ 5,5-ական (30-54-րդ), Միհեր Հովհաննիսյան՝ 4,5 (65-71-րդ):

ՖՈՒՏԲՈԼ

«Սպարտակի» 5-րդ հաղթանակը

Ռուսաստանի մայրաքաղաքում ավարտվեց Համագործակցության երկրների գավաթի 8-րդ խաղարկությունը:

Կիսաեզրափակիչ երկրորդ խաղում Մոլդովայի չեմպիոն «Զիմբրուն» 4-0 հաշվով հաղթեց Բելառուսի չեմպիոն ԲՍՏԵ-ին, իսկ «Սկոնտոն» (Լատվիա), բավականին անսպասելիորեն «Սպարտակին» (Ռուսաստան) 2-1: Բայց վերջինս գործնականում ապահովել էր իր մասնակցությունը եզրափակիչ խաղին, եւ այս պարտությունը դեր չխաղաց:

Գավաթի համար անցկացված եզրափակիչ հանդիպումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել: Մոսկվայի «Օլիմպիական» մարզահամալիրի մեծ սրահը բավականին թվով ֆուտբոլասերներ էր հավաքել: «Սպարտակ»-«Զիմբրու» հանդիպման առաջին կեսն ընթացավ համարյա հավասար պայքարում: Միայն մեկ գոլ արձանագրվեց. խաղի հաշիվը 28-րդ րոպեին բացեց սպարտակցի Ալեքսանդր Շիրկոն: Այս գոլից առաջ եւ հետո հիշենալիները երկու անգամ գրավեցին Ռուսաստանի չեմպիոնի դարպասը, բայց երկու դեպքում էլ մրցավարը «խաղից դուրս» դրություն արձանագրեց:

Երկրորդ խաղակեսում մոսկվացիների առավելությունն արդեն զգալի էր: Վիկտոր Բուլատովը (68) եւ Եգոր Տիտովը (83) եւս երկու գոլ խփեցին, եւ «Սպարտակը» հաղթեց 3-0 հաշվով: Սա «Սպարտակի» 2-րդ անընդմեջ, իսկ ընդհանուր առմամբ 5-րդ հաղթանակն է Համագործակցության գավաթի մրցումներում:

12 մլն դոլար՝ 4 րոպեում

Մանչեսթր քաղաքում այնքան սպասված մենամարտ անցկացրին ծանր քաշային բոքսֆամարտիկներ Մայք Թայսոնը (ԱՄՆ) եւ Զուլիուս Ֆրենսիսը (Անգլիա):

Այս հանդիպմանը նախորդել էին սպասման շաս օրեր: Բանն այն է, որ Անգլիայի իշխանությունները երկար ժամանակ մուտքի վիզա չէին տալիս Թայսոնին: Պատճառն այն է, որ ըստ գործող կարգի, մուտքի իրավունքից զրկվում են դատվածություն ունեցողները: Իսկ աշխարհի նախկին չեմպիոնը երկու անգամ բանտ է նստել: Ինչեւէ, խնդիրը հարթվեց, եւ մենամարտն ի վերջո կայացավ: 33-ամյա Թայսոնի հաջողության հնարավորությունները չափազանց բարձր էին գնահատվում: Նրա մրցակցի՝ 35-ամյա Ֆրենսիսի ամենախոշոր նվաճումները Բրիտանական համագործակցության եւ Անգլիայի չեմպիոնի կոչումներն են:

Մենամարտը հաստատեց, որ հրոք անհավասար ուժեր են մրցակցում: Երկրորդ ռաունդում ընդամենը 1 րոպեից մի փոքր էր անցել, երբ մրցավարը, ի նշան Թայսոնի բացահայտ առավելության, դադարեցրեց մենամարտը: Նրա որոշումը ժամանակին էր: Ֆրենսիսը հասցրել էր երկաթյա Մայքի ծանր հարվածներից հետո 5 անգամ հայտնվել ոտքի հատակին: Մենամարտը տեւեց ընդամենը 243 վայրկյան: Այդ ընթացքում Թայսոնը 12 մլն դոլար վաստակեց, իսկ նրա մրցակիցը զգալիորեն փոքր: Հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսում բոքսֆամարտիկները բարյացակամ էին տրամադրված միմյանց նկատմամբ ու ջերմորեն գրկախառնվեցին, ինչը բոլորովին բնորոշ չէ Թայսոնին: Գուցե նա փոխվե՞լ է:

Այժմ սկանդալային հարուստ կենսագրություն ունեցող մարդիկը նախընտրում է մի քանի ամիս անցկացնել Եվրոպայում. նա հրավերներ է ստացել մի շարք երկրներից: Իսկ տարվա ընթացքում Թայսոնին ավելի լուրջ մենամարտեր են սպասում: Մարգասերները հույս ունեն, որ կկայանան նրա հանդիպումները երկու հանրահայտ բոքսֆամարտիկների՝ Լենոքս Լյուիսի եւ Էվանդեր Հոլիֆիլդի հետ:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՈՍԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Բենուել: 2. Սթիվենսոն: 3. Իկար: 5. Եվրո: 6. Սան: 7. Ռոակ: 9. Առոն: 10. Կուլիջանով: 11. Վանաուր: 12. Հուսար: 13. Իվանե: 14. Նագասակի: 15. Ալիակիր: 18. Իմաս: 19. Այուին: 24. Կանադա: 25. Ալբունյան: 26. Բակալավր: 27. Սանգան: 28. Կայմ: 31. Աղասի: 34. Իզիդա: 36. Գլիցերին: 38. Մուրացան: 39. Սելինջեր: 40. Խոնենյի: 42. Երոնյա: 44. Ալբանիա: 49. «Բոդդ»: 50. Գահնամակ: 51. Սխմատովա: 52. «Ալինա»: 56. Կասկադ: 58. Արագ: 59. Թումեն: 62. Կալինոսկի: 63. Եկմալյան: 66. Բուրքոնյան: 68. Ընչասեր: 69. Խիմեներ: 70. Ելփիս: 71. Վառան: 72. Ոլթոնիկ: 75. Թառաչ: 76. Սլիբի: 80. Թաքա: 81. Բեզե: 82. Արաս: 83. Իշլի: 86. ԱԻՄ:

Հորիզոնական

1. Բաստիլ: 4. «Գենամերոն»: 8. Խարկով: 16. Նվիրատու: 17. Վերտինսկայա: 20. Վանիլին: 21. Հայնե: 22. Շագալ: 23. Երնիկ: 25. Անսկիզբ: 27. Մսագու: 29. Կիկերոն: 30. Վանգա: 32. Ուկրաինա: 33. Գավիթ: 35. Ագրա: 37. Լայմա: 41. Յուրմալա: 43. Նարին: 45. Սեղորա: 46. Վարտիվ: 47. Վարդիթեր: 48. Ոդենբախ: 53. Աջանա: 54. Խեյֆից: 55. Ֆրանկ: 57. «Հաստակում»: 59. Թավիշ: 60. Ամիշ: 61. Տոկոն: 64. Արատես: 65. Ուրաթ: 67. Կզբլկում: 73. Իրինդ: 74. Կալկաթա: 77. Նաթաբ: 78. Տաղե: 79. Ուայդ: 84. Նեսկաֆե: 85. Պլեխանովիա: 87. Բաշկան: 88. Սոիտակ: 89. «Վերոնոսի»: 90. Պիլոտ:



Մրցանակային հաջող խաչբառը կտպագրվի «Ազգի» փետրվարի 5-ի համարում:
Ճիշտ լուծել եւ առաջնահերթ մրցանակը ձեռք է բերել

Ուղղահայաց

1. Ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաք: 2. Լիտվական ֆուտբոլային ակումբ: 3. Իտալական «Լացիո» թիմի արգենտինացի ֆուտբոլիստ: 4. Հոլանդացի ֆուտբոլիստ, «Եվրոպա-96»-ի մասնակից: 7. Ճապոնացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 8. Ուկրաինական ֆուտբոլային ակումբ: 9. 1958 թ. Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստը: 14. Ճապոնիայի հավաքականի կիսապաշտպան: 15. Մեքսիկացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 16. Կիեւի «Դինամոյի» պաշտպան: 18. Շախմատային տերմին: 19. Խորվաթիայի հավաքականի պաշտպան: 21. Հայկական ֆուտբոլային ակումբ: 23. Ֆուտբոլի Հայաստանի 1996-97 թթ. առաջնությանը մասնակից թիմ: 24. Գերմանացի ֆուտբոլիստ, 1996 թ. Եվրոպայի չեմպիոն: 28. Ճամայկացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 29. «Առարատ-73»-ի ֆուտբոլիստ: 31. Ֆրանսիացի լրագրող, Չեմպիոնների գավաթի խաղարկության նախաձեռնող: 33. Ավստրիացի ֆուտբոլիստ, 1982 թ. աշխարհի առաջնության մասնակից: 34. Շախմատային տերմին: 36. Սաֆուր հաղթանակ ծյուղոյում: 37. «Լացիոյի» ֆուտբոլիստ, Իտալիայի հավաքականի անդամ: 38. Ֆրանսիական ֆուտբոլային ակումբ: 40. Բելգիացի ֆուտբոլիստ, 1994 թ. աշխարհի առաջնության մասնակից:

Հորիզոնական

4. Իսպանական «Սեւիլիա» թիմի ֆուտբոլիստ: 5. Հայաստանի հավաքականի ֆուտբոլիստ: 6. Անգլիական «Նյուքասլ» թիմի կիսապաշտպան: 10. Ուկրաինայի հավաքականի ֆուտբոլիստ: 11. Երեւանի «Երեւան» թիմի գլխավոր մարզիչը: 12. Ճապոնացի ֆուտբոլիստ, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 13. Արգենտինացի ֆուտբոլիստ, 1994 թ. աշխարհի առաջնության մասնակից: 17. Ֆրանսիացի դարպասապահ, «Եվրոպա-96»-ի մասնակից: 20. 1986 թ. Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստը: 22. Ռուսաստանի հավաքականի ֆուտբոլիստ: 24. Ավստրիական ֆուտբոլային ակումբ: 25. «Կիլիկիա» թիմի պաշտպան: 26. Ֆրանսիական ֆուտբոլային ակումբ: 27. Ուկրաինայի հավաքականի ֆուտբոլիստ: 30. Նիգերիայի հավաքականի կիսապաշտպան: 32. «Ֆրանսիա-98»-ի մասնակից հավաքական: 33. «Բորուսիայի» ֆուտբոլիստ, 1997 թ. Չեմպիոնների լիգայի հաղթող: 35. Ֆրանսիական ֆուտբոլային ակումբ: 39. Ֆինլանդական ֆուտբոլային ակումբ: 41. Բրազիլացի դարպասապահ, 1994 թ. աշխարհի չեմպիոն: 42. Իսպանացի հարձակվող, «Ֆրանսիա-98»-ի մասնակից: 43. Հարավային Կորեայի հավաքականի հարձակվող: 44. Իսպանական ֆուտբոլային ակումբ: 45. Հարավային Կորեայի հավաքականի գլխավոր մարզիչը:

Կազմեց ՆԱՐԵՍ ՏՈՆՈՅԱՆԸ

ՈՒԶՍՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանը 50 տոկոսով ավելացնելու է պաշտպանության ծախսերը

ՄՈՍԿՎԱ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐ. Ռուսաստանի կառավարությունը որոշում է կայացրել 2000 թվականին պաշտպանական պաշտպանությունը 50 տոկոսով ավելացնելու մասին, քանի որ երկրի պաշտպանունակությունը տուժում է ռազմական ոլորտի ոչ լիակատար ֆինանսավորման հետեւանքով: Այդ մասին հայտարարել է Ռուսաստանի նախագահի պաշտոնակատար Վլադիմիր Պուտինը:

Նա հերքում է, թե այդ միջոցն առնչվում է Չեչնիայի պատերազմի հետ: Սակայն պարզ է, որ ռազմական անհաջողությունները հանգեցրին միջոցների արմատական վերաբաշխմանը միջուկային ուժերից դեպի սովորական զորաշինությունները, որոնք այժմ կիրառվում են Չեչնիայում:

Պուտինը, որը նախագահական ընտրություններում հաղթողի գլխավոր հավակնորդն է, նախարարների կաբինետի նիստի ժամանակ հայտարարել է, որ պաշտպանական ոլորտի թերի ֆինանսավորումը կասկածներ է ծնել այն առնչությամբ, թե արդյոք Ռուսաստանը երբեւէ կունենա ժամանակակից բանակ՝ զինված արդիական զենքով:

Ռուսաստանի ռազմարդյունաբերական համալիրը, անկասկած, գոհունակությամբ կընդունի Պուտինի ելույթը, այն արդեն վաղուց անհրաժեշտ միջոցներ չի ստանում, սակայն գոյատեւում է: Պետական պատվերների կտրուկ նվազման հետեւանքով պաշտպանական ձեռնարկությունների մեծ մասը սնանկացման եզրին է հայտնվել:

Փորձագետների կարծիքով, պաշտպանության ծախսերի ավելացումը հնարավոր դարձավ նավթի համաշխարհային գների բարձրացման արդյունքում, որոնք էապես համալրեցին Ռուսաստանի պետական գանձարանը: Սակայն նրանք նշում են, որ առաջին անգամ ռազմական ծախսերն ավելացան անցյալ տարի կոսովոյի իրադարձություններից հետո, որտեղ ՆԱՏՕ-ի գործողությունները հակառուսական տրամադրությունների հզոր ալիք առաջացրին Ռուսաստանում:

Ռազմավարությունների եւ տեխնոլոգիաների վերլուծության մոսկովյան կենտրոնի ղեկավար Ռուսլան Պուխովի ասելով, նոր միջոցները կուղղորդվեն ուղղաթիռների եւ զորային ինքնաթիռների արդիակացմանը: Օրինակ ՍՈՒ-25 ինքնաթիռը կհանդերձվի գիշերային տեսանելիության սարքերով եւ նոր հրթիռներով ու ռումբերով:

«Շեշտը կդրվի փոքր ինտենսիվության հակամարտություններում օգտագործվող սպառազինությունների վրա», ասում է Պուխովը: Նախորդ տարիներին փողերի մեծ մասը գնում էր միջուկային հրթիռների ստեղծման վրա: Սակայն այժմ ասիճանաբար նվազում է գլոբալ պատերազմի սպառնալիքը, եւ միեւնույն ժամանակ ավելանում է տարածաշրջանային հակամարտությունների վտանգը»:

Լրացուցիչ տրամադրվող միջոցները կօգտագործվեն նաեւ ցամաքային ուժերը կարի նոր միջոցներով զրահավորելու եւ նոր ռազմական հրթիռներ արձակելու ճանապարհով հետախուզությունը բարելավելու համար: Գրոզնիում գրոհայիններին հաջողվում է խուսափել ռուսական զորքերի հետ ընդհարումներից այն պատճառով, որ նրանք օգտագործում են դյուրակիր ռադիոկայաններ, մինչդեռ ռուսական տանկերի անձնակազմերը կարող են միմյանց հետ կապվել միայն ծայնի միջոցով:

Վերջին 10 տարվա ընթացքում Ռուսաստանի ռազմական ծախսերը կտրուկ կրճատվել էին: 1989 թվականին, երբ դեռ գոյություն ուներ ԽՍՀՄ-ը, դրանք կազմել են ՆԺԱ-ի 14,2 տոկոսը: Սակայն 1997 թվականին, Ստոկհոլմի «International Peace Research Institute»-ի տվյալներով, այդ թիվը նվազել է՝ հասնելով մինչեւ 4 տոկոսի:

2000 թվականի բյուջեն պաշտպանության ծախսերի համար նախատեսում է 4,6 մլրդ դոլար, այդ թվում 1,4 մլրդ՝ սպառազինություններ գնելու համար (անցյալ տարի ռազմական ծախսերը կազմել են 4 մլրդ դոլար): Պուխովի ասելով, սպառազինությունների գնման նպատակով սովորաբար ծախսվում է ռազմական բյուջեի 10-15 տոկոսը, սակայն այս տարի այդ թիվը պետք է ավելանա մինչեւ 30 տոկոս:

Այնուամենայնիվ, փորձագետները նշում են, որ Ռուսաստանը հազվադեպ է կատարում իր խոստումները, հատկապես պաշտպանության կարիքների համար բյուջետային միջոցներ հատկացնելու առումով: Պուտինը խոստացել է, որ մինչեւ այս տարվա մայիս ամիսը կառավարությունը կմարի նախկինում մատակարարված սպառազինությունների դիմաց պարտքերը բոլոր պաշտպանական ձեռնարկություններին:

BSC Business Support Center

BUSINESS SUPPORT CENTER

- Գործարար խորհրդատվություն
- Գործարար դասընթացներ
- Առեւտրի խթանում եւ տեղեկատվություն
- Գործարար օրենսդրության խորհրդատվություն

Հայտարարություն

Շտապ վաճառվում է 3 սենյականոց (96 քմ, եվրանորոգված) բնակարան՝ քաղաքի կենտրոնում:

Հեռախոս 236897

Փոքր դրամաշնորհներ-2000

Հարգելի պարոն/տիկին,

Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակը ուրախ է հայտնելու փոքր դրամաշնորհների ծրագրային (ՓԴՇ) հայտերի ընդունման մասին: Դրամաշնորհների գումարը կկազմի 5000-10000 ԱՄՆ դոլար եւ կտրվի շահույթ չհետապնդող տեղական հասարակական կազմակերպություններին: Դրամաշնորհները կհատկացվեն մրցութային հիմունքներով:

Դրամաշնորհները կհատկացվեն առաջնահերթ կարեւորություն ունեցող որոշակի գործունեություն ծավալելու համար եւ ուղղված կլինեն *չքավորության կրճատմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանը եւ տարածաշրջանային համագործակցության խնդիրներին:* Ֆինանսական օժանդակությունը կարող է ներառել գիտաժողովների եւ սեմինարների, ուսումնական սեմինարների, հատուկ հրատարակությունների թողարկման կամ էլ հրատարակության հիմնադրման նախնական ծախսերի հատկացում, տեսանյութերի ձեռք բերում:

Դրամաշնորհների ծրագիրը օժանդակություն չի հատկացնի կառավարման, գիտահետազոտական, ակադեմիական ուսումնական ծրագրերին, հաստատություններին աջակցություն նախատեսող ծրագրերին, կրթաթոշակների հատկացմանը, կամ էլ անհատ անձանց, որ կդիմեն իրենց անունից, այդ թվում նաեւ ճանապարհածախսերի կամ էլ ուսման վարձի վճարման համար: Խնդրում ենք նաեւ նկատի ունենալ, որ հասարակական կազմակերպությունների վարչարարական ծախսերը չեն կարող ընդգրկվել ֆինանսական օժանդակության մեջ:

Խնդրվում է ծրագրի տրագիր 1-2 էջանոց նախնական հայտը Ձեր հասարակական կազմակերպության մասին մանրամասն տեղեկությունների հետ միասին ներկայացնել Համաշխարհային բանկի Երեւանի գրասենյակ (Հանրապետության հրապարակ, Խորհրդարանի 2, Երեւան): ՓԴՇ-ի հանձնաժողովը նախնական ընտրության փուլն անցած թեկնածուներին կխնդրի ներկայացնել առավել մանրամասնեցված ծրագրային հայտեր:

Մերժված հայտերը չեն վերադարձվում:

Ծրագրային հայտերը կընդունվեն 2000 թ. փետրվարի 1-ից մինչեւ մարտի 1-ը ներառյալ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

USAID

AED

Academy for Educational Development

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID) եւ կրթական զարգացման ակադեմիան (AED)

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա **փետրվարի 4-ին, ժամը 11:30-ին,** Թեքեյան կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության ներդրումների գլխավոր վարչության պետ

Վիկտորիա Տեր-Նիկողոսյանը

«Կարիտաս փայտամշակման կենտրոն» հայ-շվեյցարական համատեղ ձեռնարկության նախագծի ղեկավար

Պետեր Ցբինդեն

«Արտասահմանյան ներդրողների համագումար» հասարակական կազմակերպության նախագահ

Վարուժան Կուզուկյանը

Թեման՝ **«ՀՀ ներդրումային քաղաքականությունը»:**

Դասախոսությունից հետո կկազմակերպվի այցելություն «Կարիտաս փայտամշակման կենտրոն» հայ-շվեյցարական ՀՁ:

ՀԱՄԱՌՈՏ

Ժնեւում սկսվեց կիպրոսյան բանակցությունների երկրորդ փուլը

ԺՆԵՎ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐ. Հունվարի 31-ին Ժնեւում բացվել է հունական եւ թուրքական մասերի բաժանված Կիպրոս կղզու ապագայի շուրջ բանակցությունների երկրորդ փուլը: Բանակցությունները կիրականանան ՄԱԿ-ի միջնորդների մասնակցությամբ: Ինչպես եւ առաջին փուլի ժամանակ, կիպրոսցի հույների եւ թուրքական համայնքի առաջնորդներ Գլավկոս Քլերիդիսը եւ Ռաուֆ Դենքթաշը իրար հետ չեն հանդիպի, բանակցությունները տեղի կունենան առանձին սենյակների միջեւ: Փորձագետների կարծիքով, չնայած Թուրքիայի եւ Հունաստանի միջեւ հարաբերությունների բարելավմանը՝ Կիպրոս կղզու առնչությամբ խնդրի կարգավորման հավանականությունը նվազագույն է:

Իսլամը Իտալիայում երկրորդ տեղն է հավատացյալների թվով

ՀՈՌՄ, 31 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՏԵՊՐԵՍ: Իսլամը Իտալիայում երկրորդ տեղն է հավատացյալների թվով՝ գիջելով միայն կաթոլիկությանը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այսպիսի տվյալներ է հրապարակել «Կարիտաս» գործակալությունը: Այդ բարեգործական կազմակերպության անելիքների թվում մտնում է ներգաղթողներին եւ գաղթականներին օգնություն ցույց տալը: Գինով եւ «պորկետայով» (խոզապուխտով) հռչակված երկրում մահմեդականների թիվն, այդուհանդերձ, այնցյալ տարի աճեց 2 տոկոսով, հիմնականում՝ ներգաղթողների հաշվին: Ընթացիկ տարվա սկզբի դրությամբ Ապենիններում ապրող մահմեդականների թիվը կազմում էր 525 հազար: Իսլամ դավանողները երրորդ տեղ են մղել բողոքականներին եւ ուղղափառներին:

«Կասիոյի» նոր նվաճումները

Միկրոէլեկտրոնային արդյունաբերության համաշխարհային առաջատարներից մեկը՝ ճապոնական «Կասիո» ֆիրման, Լաս Վեգասում բացված լայն սպառման էլեկտրոնային ապրանքների ցուցահանդեսում նոր առաջընթաց արձանագրեց՝ ներկայացնելով երկու յուրօրինակ փոքրածավալ ժամացույց: Առաջինը 32 գրամանոց թվային լուսանկարչական ապարատ է, որը կարող է «մտապահել» շուրջ 100 պատկեր: Դրանք հնարավոր է ցուցադրել ժամացույցի էկրանի վրա կամ ենթակարմիր ճառագայթներով փոխադրել միկրոհամակարգչի մեջ: Երկրորդը 70 գրամանոց թվային ձայնագրիչ է, որը թույլ է տալիս սովորական ականջակալներով շուրջ մեկ ժամ ունկնդրել MP3 փոքրիկ ձայներիզը: Չմոռանանք նշել, որ պատկերների ու ձայնի վերարտադրությունից բացի հիշյալ երկու ժամացույցները նաեւ ժամն են ցույց տալիս:

«ԷՔՍՊՐԵՍ»

ՀԵՌՈՒՏԱՍԱՏԵՍԱՅԻՆ

1 փետրվար

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Մամուլի կողակ
10.30 Հեռուստասերիալ «Ուեյնի մանիֆեստը»
11.00 Նոր սերունդ
11.30 Գ/Ֆ «Մարքայի մասին»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սեզամ, բացվիր
18.00 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 Հեռուստալոտո
20.00 Շրջադարձ
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Ֆ «Արյուն եւ գինի»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ծեծկրտաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեթեւս

9.05 Վաղ առավոտյան
10.00, 18.20 Մուլտֆիլմ
10.20 Բնության արգելանոցներ. Գալապագոս
10.45 Վ/Ֆ «Ժեռար Ֆիլիպ»
12.00, 18.05, 20.30, 23.45 Լուրեր
18.35 Մարզաշխարհն անցած շաբաթ
19.05 «Օլիվ ամրոցը»
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 Ծանոթ-անծանոթը
21.20 Գ/Ֆ «Մենք ենք, մեր սարերը»
23.10 Ուշ երեկոյան

9.00 Տոմար
11.00 Ասպարեզ (կրկնություն)
19.00 Չոչիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Մամուլի խոսնակ
20.05 Հմայիլ
20.30 Ասպարեզ
21.15 Հրապարակ
22.0 Քրոնիկոն
22.10 Վ/Ֆ «Սորգեցնյա աշխարհի գաղտնիքները»
24.00 Զրո ժամ
0.05 Ամեսա
0.30 Խուժան ալիք
0.55 Գ/Ֆ «Ֆիլիանը ծննդյան օրը» (վարսին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Մուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.40 Ամեն ինչ հնարավոր է
17.00 Պատանի գլադիատորները «Լեռան արքան» ծրագրում
17.25 Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Ծիծաղի համայնապատկեր
19.55 Փնտրում եմ Լեզ
20.50 Սերիալ «Տոկուն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Ֆ «Բարձունք» (դերերում Ն. Ոիբնիկով, Ի. Մակարովա, Ս. Սերիժենովա, 1957 թ.)
00.40 Սոլորությունների ժողովածու
01.10 Նորություններ
01.30 Գ/Ֆ «Ամառվա ընկեր» (դերերում Գ. Մանտենյա, Ն. Նեգոդա, Ս. Ռոլսթոն, ԱՄՆ, 1990 թ.)

7.30-10.20 Բարի լույս, Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանմունք
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա-սպորտ»
11.00 Հոմեոպատիա եւ առողջություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի անունը»
12.55 Մուլտֆիլմեր
13.00 Իմ XX դարը
13.25 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Հոմեոպատիա եւ առողջություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց քաղաք»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.05 Սերիալ «Վայրի հրեշակը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.30 Մուլտսերիալ «Գաղտնի գործակալները»
18.20 Ազատակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը 2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 Լիակատար մոռեռն
22.45 Կինոյի ժամ. Մարինա Մոգիլեւսկայան, Նիկոլայ Երյոմենկոն, Սերգեյ Գազարովը «Վարձով գլադիատորը» ֆիլմում
00.30 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանմունք
00.45 «Կ2»-ը ներկայացնում է
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1190. Տպաքանակը 4000. Ստորագրված է տպագրության՝ 31.01.2000. Գինը 100 դրամ